

58(074)  

---

5-64

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՅԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ



58(074)

Ե-62

ԼՐՄՖԱՆ

1940

ՅԵՐԵ

20 JUL 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ.

1975

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ  
БОТАНИЧЕСКИЙ ИНСТИТУТ

# ПУТЕВОДИТЕЛЬ

ПО ЕРЕВАНСКОМУ  
БОТАНИЧЕСКОМУ САДУ

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а  
ЕРЕВАН

58(074)

6-64

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՑԻԼԻԱԼ  
ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՅԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ

ԱՐՄՑԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1940

14062

09 APR 2013



3792 74

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Յերևանի Բուսարանական այգու Ուղեցույցը հրատարակվում է առաջին անգամ, Բուսարանական այգու 1940 թվին տեղի ունենալիք սլաշտոնական բացման կապակցությամբ: Այս հրատարակությունն ընդգրկում է այգու միայն այն մասը, վորը մտնում է յուրացման առաջին հերթի ծավալի մեջ և կարող է լայն կերպով ցուցադրվել այցելուներին:

Այգու տերիտորիայի մյուս մասը, վորտեղ արդեն կան մասնակի տնկումներ, Ուղեցույցի մեջ չի նկարագրվում: Ուղեցույցից հեշտ ոգտվելու նպատակով նկարագրումները կատարված են ըստ այգու առանձին բաժինների և վերջիններիս ստորաբաժանումների՝ յենթաբաժինների, հողամասերի, կվարտալների և այլն: Բացի զրանից, Ուղեցույցին կցված են՝ Բուսարանական այգու տերիտորիայի յուրացված մասի հեռանկարային պլանը և բաժինների ու յենթաբաժինների սխեմատիկ պլանները:

Ուղեցույցը կազմելիս մենք աշխատել ենք նկարագրումներն այնպես կատարել, վոր այցելուն հեշտությամբ կարողանա ծանոթանալ այգու ձևավորված բոլոր կարևորագույն ուղեմասերին:

Յերևանի Բուսարանական այգին յերկու մուտք ունի—առաջինը՝ Բանաքեռ գյուղի կողմից, իսկ յերկրորդը՝ Նորքի ձորով, Ավանի խճուղով: Ուղեցույցն

այնպես և կազմված, վոր նրանից կարողանան ոգովել թե՛ Քանաքեռի և թե՛ Նորքի մուտքից յեկող այցելուները: Այգու բոլոր հողամասերում կան բացատրական տախտակներ, վորոնք ցույց են տալիս բաժիններին, յենթաբաժիններին, կվարտալներին, հողամասերին և ծառուղիների անունները: Այգու տերիտորիայում ներկայացված բոլոր բույսերն ունեն հատուկ կտիկետներ, վորոնց վրա գրված են բույսի ընտանիքը, ցեղը, տեսակը և ծագման վայրը: Բույսերի տեսակների անունները բերված են լատիներեն, հայերեն և ուսերեն լեզուներով: Ուղեցույցը կազմելուն մասնակցել են Բուսաբանական Ինստիտուտի և այգու գիտական աշխատակիցներ՝ Աստվածատրյան Զ. Ա., Ավագյան Ա. Ա., Արարտոյան Ա. Գ., Խրիմլյան Ա. Ի., Ղազարյան Յե. Ս., սլրոֆ. Մաղաքյան Հ. Կ., Ֆեոդորով Ա. Ա., Յարոշենկո Գ. Դ. և Յարոշենկո Պ. Դ.:

Բուսաբանական Ինստիտուտի  
գիրքեկտոր Յե. ՂԱԶԱՐՅԱՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Յերևանի Բուսաբանական այգին բնում է 105 հեկտ. տարածություն և գտնվում է քաղաքից դեպի հյուսիս-արևելք ուղիղ գծով 3,5 կմ հեռավորության վրա, Քանաքեռ և Ավան գյուղերի միջև:

Այգու սահմաններն են—հյուսիսից՝ Քանաքեռից Ավան տանող միջգյուղյան ճանապարհը, վորն անցնում է այգու հյուսիսային մասի ցանկապատի մոտով, արևելյան կողմից՝ Գեղաու-չայ գետակը, հարավից այգուն սահմանակից է Յերևանի Քաղաքային Խորհրդի Գործկոմի հողային ազատ տարածությունը, վորը կազմում է Քանաքեռի հարթավայրում հիմնված անտառապուրակի շարունակությունը:

Այգու տերիտորիան գտնվում է ծովի մակերևույթից 1200—1250 մետր բարձրության վրա, հողերն ընկած են թե՛ Ավանի հովտի հատակ հանդիսացող տափարակ մասում և թե՛ զանազան աշխարհագրական թեքության լանջերի վրա: Տերիտորիայի կենտրոնական մասում գտնվում է մի բլրակ՝ մոտ 28 հեկտ. տարածությամբ: Բլրակի գագաթը 50 մետր բարձր է տափարակային մասից և դա հնարավորություն է տվել ձևավորել այստեղ Հայաստանի և անալոգ—յերկրների բուսականության տեսակների մի շարք լանդշաֆտա-

այնպես և կազմված, վոր նրանից կարողանան ոգովել թե Քանաքեռի և թե Նորքի մուսքից յեկող այցելուները: Այգու բոլոր հողամասերում կան բացատրական տախտակներ, վորոնք ցույց են տալիս բաժինների, յենթաբաժինների, կվարտալների, հողամասերի և ծառուղիների անունները: Այգու տերիտորիայում ներկայացված բոլոր բույսերն ունեն հատուկ ետիկետներ, վորոնց վրա գրված են բույսի ընտանիքը, ցեղը, տեսակը և ծագման վայրը: Բույսերի տեսակների անունները բերված են լատիներեն, հայերեն և ռուսերեն լեզուներով: Ուղեցույցը կազմելուն մասնակցել են Բուսաբանական Ինստիտուտի և այգու գիտական աշխատակիցներ՝ Աստվածատրյան Զ. Ա., Ավագյան Ա. Ա., Արարատյան Ա. Գ., Խրիմյան Ա. Ի., Ղազարյան Յե. Ս., պրոֆ. Մաղաքյան Հ. Կ., Ֆեոդորով Ա. Ա., Յարոշենկո Գ. Դ. և Յարոշենկո Պ. Դ.:

Բուսաբանական Ինստիտուտի  
ղիբեկտոր Յե. ՂԱԶԱՐՅԱՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Յերևանի Բուսաբանական այգին բռնում է 105 հեկտ. տարածություն և գտնվում է քաղաքից դեպի հյուսիսարևելք ուղիղ գծով 3,5 կմ հեռավորության վրա, Քանաքեռ և Ավան գյուղերի միջև:

Այգու սահմաններն են—հյուսիսից՝ Քանաքեռից Ավան տանող միջգյուղյան ճանապարհը, վորն անցնում է այգու հյուսիսային մասի ցանկապատի մոտով, արևելյան կողմից՝ Գեղառ-չայ գետակը, հարավից այգուն սահմանակից է Յերևանի Քաղաքային Խորհրդի Գործկոմի հողային ազատ տարածությունը, վորը կազմում է Քանաքեռի հարթավայրում հիմնված անտառապուրակի շարունակությունը:

Այգու տերիտորիան գտնվում է ծովի մակերևույթից 1200—1250 մետր բարձրության վրա, հողերն ընկած են թե Ավանի հովտի հատակ հանդիսացող տափարակ մասում և թե զանազան աշխարհագրական թեքությունների լանջերի վրա: Տերիտորիայի կենտրոնական մասում գտնվում է մի բլրակ՝ մոտ 28 հեկտ. տարածությամբ: Բլրակի գագաթը 50 մետր բարձր է տափարակային մասից և դա հնարավորություն է տվել ձևավորել այստեղ Հայաստանի և անալոգ—յերկրների բուսականություն տեսակների մի շարք լանդշաֆտա-

յին խմբեր ու նպատակահարմար կերպով ոգտագործել ջրմուղի միջոցով բլրակը բարձրացող ջուրը՝ վոռոգման և ջրային մակերեսներ ստեղծելու համար:

Բուսաբանական այգու կլիմայական պայմանները Յերևանի պայմաններից տարբերվում են նրանով, վոր Բուսաբանական այգում ձմեռն ավելի խիստ է, ձմեռվա միջին ջերմությունը մոտ  $2^{\circ} \text{C}$  և ավելի ցածր է Յերևանի ձմեռվա միջին ջերմաստիճանից, դրա հետևանքով էլ Բուսաբանական այգում վեգետացիոն շրջանի տևողությունը մոտավորապես 15 օրով ավելի կարճ է, քան Յերևանում: Ջերմության բացարձակ մաքսիմումն ամառը հասնում է  $40^{\circ}$ -ի, ձմեռվա միջին ջերմությունը հասնում է  $8-14^{\circ}$  գերոյից ցած, իսկ առանձին տարիներին՝ մինչև  $25^{\circ}$  և ավելի ցած: Տեղումների միջին տարեկան քանակը կազմում է 330—360 մ. մ.: Տեղումները լինում են գլխավորապես ձմեռը և զարնանը, ամառվա շրջանը բնութագրվում է տեղումների գրեթե լրիվ բացակայությամբ: Գարնանը և ամառը փչում են տարբեր ուղղություն քամիներ, վորոնք հաճախ հասնում են շատ մեծ ուժի: Տերիտորիայի հողերն ըստ իրենց հզորություն և կմախքայնություն այգու տարբեր մասերում բավական տարբերվում են իրարից: Յենթահողը նույնպես ունի բնորոշ տարբերություններ: Այստեղ մեծ մասամբ կարմիր ու սև տուֆ և, անդեզիտաբազալտային լավա և միայն մի աննշան մասը կազմված է գելյուվիալ արտաբերումներից:

### ԱՅԳՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բուսաբանական այգու տերիտորիան կազմված է Ավան գյուղի նախկին հողերից, վորոնց վրա կազմա-



Յերևանի Բուսաբանական այգու նախագիծը.

կերպոված եր Զինկոտայի մերձքաղաքային խորհուրդի սուբյուեւը, իսկ դրա լիկվիդացիայից հետո՝ ծխախոտի փորձակայանը, և Քանաքեռ գյուղի ու Յերևանի Քաղխորհրդի հողերից: Այգուեն շատ մասիկ գտնվում են Ավանի տուֆի և ավազի հանքերը:

Բուսաբանական այգու կազմակերպումն սկսվել է 1935 թվի հուլիսին, ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի նախաձեռնությամբ: Բուսաբանական այգու կազմակերպման հեռանկարային պլանը կազմելու համար 1935 թ. ոգոստոսին Յերևանում հրավիրվել է մի խորհրդակցություն, վորին մասնակցել են Անինգրադից, Կիևից, Թբիլիսիից և այլ քաղաքներից յեկած մի շարք խոշոր մասնագետներ: Այդ խորհրդակցությանը մշակվել են Յերևանի այգու խնդիրները և աշխատանքի ուղղությունը, տեղիտորիայի յուրացման պլանն ըստ տարիների և այգու կառուցվածքը: Մկզբնական ճարտարապետական պլանը կազմելու աշխատանքը հանձնարարվել է պրոֆ. Լ. Ա. Իլյինին, իսկ հետագայում գլխավոր պլանը վերջնականապես մշակվել է Հայպետ. նախագծային տրեստում՝ ճարտարապետ Գ. Ս. Մուրզայի ղեկավարությամբ:

Այգու աշխատանքներն սկսվել են 1935 թ. յերկրորդ կեսից: Առաջին տարվա ամբողջ բյուջեն յեղել է 35 հազար ռուբլի, վորը ծախսվել է մի փոքրիկ ջերմատան կառուցման, 0,5 հեկտ. տնկարանի հիմնադրման և Հայաստանի վայրի բույսերի սերմեր հավաքելու վրա: Հետագա 1936 և 1937 թ. թ. աշխատանքները նույնպես զգալի ծավալ չստացան, քանի վոր այգուեն հատկացվող միջոցները շատ անբավարար էին: Առաջին յերկու և կես տարվա ընթացքում վոչ

մի կազմակերպություն չհետաքրքրվեց կուլտուրթական տեսակետից այնպիսի մի կարևոր հիմնարկության աշխատանքներով, ինչպիսին Բուսաբանական այգին է: Դրա հետևանքով այգին քարշ եր տալիս իր խղճուկ գոյությունը և գուրկ եր մինիմալ հնարավորություններից, ինչպես աշխատանքները ծավալելու համար անհրաժեշտ նյութական-տեխնիկական բազայի, նույնպես և իր նվաճումները ցույց տալու տեսակետից: 1938 թ. սկզբից այգին թևակոխում է իր նոր շրջանը: Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի նախագահության նոր կազմի միջնորդությամբ Հայկական ԽՍՀ կառավարությունն զգալի միջոցներ և հատկացնում այգու շինարարության ու պահպանման համար և այս մի քանի անգամ լսում է Բուսաբանական այգու հարցը և նշում է այն միջոցառումները, վորոնք ապահովում են այգու շինարարության արագ տեմպը: 1940 թվի սկզբին Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը քննարկեց Բուսաբանական այգու աշխատանքների հարցը և հատուկ վորոշում կայացրեց այգու առաջին հերթն ամսուվա վերջին բաց անելու մասին, այն հաշվով, վոր բացումը համընկնի Հայաստանում Խորհրդային իշխանությունն հաստատելու XX տարեդարձին: Այժմ, Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ, մայրաքաղաքի և ամբողջ հանրապետության աշխատավորները հնարավորություն ունեն այցելելու և ծանոթանալու յերկրի ու ամբողջ աշխարհի բուսական հարստություններին և իրենց ազատ ժամերն ու հանգիստը կուլտուրական ձևով անցկացնել Բուսաբանական այգում, վորը հանդիսանում է խորհրդային իրավակարգի դավաղը: Այս նոր նվաճումը հնարավոր յեղավ միայն

շնորհիվ այն հատուկ ուշադրութեան, վոր վերջին 2—3 տարվա ընթացքում ցուցաբերեցին Հայկ. ԽՍՀ-ի գի-  
րեկախի ուղղանները:

### ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Յերևանի Բուսաբանական այգին մտնում է Գիտու-  
թյունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Բուսա-  
բանական Ինստիտուտի կազմի մեջ, վորը կազմակերպ-  
վել է 1939 թվին—Բուսաբանական այգու և Կենսա-  
բանական Ինստիտուտի նախկին բուսաբանական սեկ-  
տորի բազայի վրա:

Բուսաբանական Ինստիտուտն ունի հետևյալ բա-  
ժինները.

1. Բույսերի սիստեմատիկայի և աշխարհագրութեան  
սեկտոր.

2. Բուսական հումուսթի սեկտոր.

3. Գեոբոտանիկայի և եկոլոգիայի սեկտոր.

4. Բուսաբանական այգի.

5. Ցիտոլոգիական լաբորատորիա.

6. Հերբարիում.


7. Գրադարան:

Բուսաբանական այգին իր հերթին ունի հետևյալ  
գիտական բաժինները.

1. Հայկական ԽՍՀ-ի ֆլորայի և բուսականութեան  
բաժին—գոյություն ունի 1937 թվից.

2. Աշխարհագրական բաժին—կազմակերպված է  
1940 թ. գարնանից.

3. Պուրակային տնկարքների և կանաչազարդման  
բաժին—կազմակերպված է 1936 թվից: Ներկայումս  
ուսնի հետևյալ յենթաբաժինները.



Ծառուկի  
Acer Negundo.

- ա) դենդրոլոգիական,
- բ) պուերակային,
- գ) ծաղկաբուծություն:

4. Ոգտակար բույսերի բաժին—կազմակերպված է 1940 թվից.

5. «Բուսական հումուսի» հոդամաս—գոյություն ունի 1938 թ.

6. Բուսաբանական այգու Կիրովականի լեռնային բաժանմունք—կազմակերպված է 1936 թվից.

7. Տնտեսական բաժին:

Այգին ունի նաև ծառաբույսերի անկարաններ և ծաղիկների բուծարաններ (8 հեկտար տարածություն), ջերմոցային տնտեսություն, սերմային և ողերևութաբանական կայաններ:

### ԲՈՒՍԱՔՍՆՍԱԿՍՆ ԱՅԳՈՒ ՊՈՒՐՍԱԿՍՅՈՒՆ ՏՆԿԱՐՔՆԵՐԸ

Բուսաբանական այգու այցելուները Քանաքեռի կողմից մտնելով այգին, անցնում են № 1 ծառուղով, վորի յերկու կողմից անկված են արևելյան չինարի (*Platanus orientalis*) յերիտասարդ ծառեր: Այդ ծառը ծագումով Փոքր Ասիայից է: Հասունացած վիճակում հասնում է մինչև 30 և ավելի մետր բարձրության: Այն վայրերում, վորտեղ ամառը շոգ է, արևելյան չինարը բավական ցրտակալուն է: Գլխավոր մուգքից վոչ հեռու, կենտրոնական ծառուղուց (№ 1) առանձնանում է մի այլ ծառուղի (№ 2), վորի յերկու կողմից անկված է ճապոնական սոֆորա (*Sophora japonica*): Քիչ ավելի հեռու, խճուղուց դեպի ձախ, ձգվում է № 3 փոքրիկ ծառուղին, վորի կողքերին անկված

են արջատխիլ (*Corylus colurna*), ձիակասկ (*Aesculus hippocastanum*) և լայնատերև հասմիկ (*Philadelphus latifolius*): Արջատխիլը շատ հետաքրքրական անտառային տեսակ է և վայրի ձևով աճում է Հայաստանի անտառներում—Իջևիվանի, Շամշադինի և այլ շրջաններում: Արջատխիլը շատ մոտ է սովորական մանր կաղինին, բայց տարբերվում է նրանով, վոր մանր կաղինը թուփ է, մինչդեռ արջատխիլը բարձրաբուն ծառ է, վոր հասնում է մինչև 30 և ավելի մետր բարձրության:

Այդ ծառուղուց դեպի ցած, այսինքն դեպի շրջանը, խճուղու յերկու կողմերում դասավորված են այգու № № 23 և 92 կվարտաները, վորտեղ անկված են վարդածաղկավորների և թիթեռնածաղկավորների ընտանիքներին պատկանող զանազան ծառային և թփային ներկայացուցիչներ:

Խճուղուց դեպի աջ, № № 92—93 կվարտաներում դասավորված են թիթեռնածաղիկների (*Papilionaceae*) ընտանիքի մի քանի ներկայացուցիչներ, ինչպես են, որինակ՝ *Colutea*-ի տարբեր տեսակները, սպիտակ ակացիան, դեղին ակացիան (*Caragana arborescens*), գլեղիչիան (*Gleditschia triacanthos*), ճապոնական սոֆորան (*Sophora japonica*) և այլն:

Այստեղ են անկված նաև Ֆոշնու (*Celtis*) զանազան տեսակները, ինչպես նաև իսպանական դրոկի (*Spartium junceum*) մի քանի թփեր:

Այդ հոդամասի դիմաց, ճանապարհից դեպի ձախ, № № 23 և 24 կվարտաներում շարունակվում են թիթեռնածաղկավորների կոլեկցիոն անկարքները, վորոնք են՝ կարագանի վեց տեսակ, հուդայի ծառի (*Cercis*) զանազան տեսակներ, յերկու տեսակ ամորֆա և այլն:

Ամորֆաներից ուշադրութեամբ արժանի յե, մանավանդ իր դեկորատիվ տեսքով, ցածրահասակ ամորֆան (Amorpha canescens)՝ ծագումով Հյուսիսային Ամերիկայից: Այս թուփը տնկված է մի փոքրիկ ծառուղու յերկու կողմերում:

Այցելուն հնարավորութեամբ ունի այստեղ ծանոթանալու նաև լեսպեզաբիային (Lespedeza bicolor) — սա հեռավոր-արևելյան դեկորատիվ թուփ է, վորը ծաղկում է ուշ աշնանը բաց մանուշակագույն ծաղիկներով, ծանոթանալու ներկատու որոճին (Genista tinctoria), վորը ծաղկում է ամռանը, դեղին ծաղիկներով: Այնուհետև, այս նույն՝ № № 23 և 24 կվարտալներում դասավորված են վարդածաղկավորների (Rosaceae) ընտանիքի վորոշ ներկայացուցիչներ, այդ թվում ասպիրակի (Spiraea) 7 տեսակ, ֆիզոկարպուսի (Physocarpus) 3 տեսակ, այնուհետև ասպիրակներին ցեղակից ստեֆանանդրան (Stephanandra Tanakae), դեկորատիվ թվուա ոտոտիպոսը (Rhodotypos kerrioides), վորը վաղ գարնանը ծաղկում է հասմիկի ծաղիկները հիշեցնող սպիտակ ծաղիկներով: Այնուհետև այստեղ գտնում ենք արոսատերև ասպիրակի, սզնու (Crataegus) հեռավոր-արևելյան և հյուսիս-ամերիկյան տեսակները, Cotoneaster-ի ամելանչիերի (Amelanchier) զանազան տեսակները, ինչպես նաև «ճապոնական սերկեկիլի» (Chaenomeles cathajensis) հատուկ տեսակը:

Այս բույսերի կենդանի կոլեկցիաները դիտելուց հետո այգու այցելուն խճուղով դիմում է դեպի Բուսաբանական այգու կենտրոնական մասը և ընկնում այսպես կոչված մեծ շրջանի տերիտորիան: Այդ շրջանի կենտրոնում կանգնած է Վ. Ի. Լենինի արձանը, վոր

կերտել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, քանդակագործ Ս. Ստեփանյանը:

Շրջանի այդ կենտրոնական մասից դեպի դուրս շրջանագծով դասավորված է վեց ծաղկանոց, վորոնց մեջ տնկված են մշտադալար գերամաստի (Viburnum tinus) ծառեր: Ծաղկանոցների արտաքին յեզրերին տնկված են արևելյան կոմպակտ ձևի տույայի (Thuja orientalis var. compacta) թփեր, իսկ ծաղկանոցների ներսի կողմից՝ Լավսոնի կոմպակտ ձևի նոճու (Chamaecyparis Lawsoniana var. compacta) թփեր: Այս բույսերի կոմպակտ ձևերը վոջ այլ ինչ են, բայց յեթև մուտացիաներ, վորոնք հեռագայում այդպեղործների կողմից բաղմացվել են իրենց դեկորատիվ հատկությունների համար: Բնության մեջ, վայրի վիճակում, կոմպակտ ձևեր չեն հանդիպում, բայց այդ ձևերը լայն կերպով կիրառվում են այգիներում և պուրակներում տնկելու համար:

Ծաղկանոցներից դեպի դուրս, արտաքին շրջանում, յերկու շրջանային ուղիների միջև № № 25 — 27 և 94 — 97 կվարտալներում գտնվում են զանազան փշատերև ծառերի տնկարքեր: Այստեղ գտնվում է յեղևնու յերկու տեսակը՝ սովորական յեղևնի (Picea excelsa), վորը տնկված է այդ կվարտալների ներքին յեզրով մի շարքով, և սիբիրական յեղևնի (Picea obovata), վորն այստեղ ներկայացված է յերկու փոքրիկ ծառով: Այնուհետև այստեղ կան Վրաստանի և Աբխազիայի անտառներում լայն կերպով տարածված կովկասյան յեղևնու (Abies Nordmanniana) մի քանի խումբեր, կան նաև ճապոնական յեղևնու (Abies firma) մի "յանի խմբեր:

« № № 27 և 97 կվարտալների կենտրոնական մասե-

3792-74



բում գտնվում են հիմալայան մայրի (Cedrus deodara) 2 խումբ: Դա շատ հետաքրքրական և դեկորատիվ ծառ է, վորն աճում է Հիմալայան լեռներում, ծովի մակերևույթից մինչև 3200 մետր բարձրություն վրա և տեղում հասնում է մինչև 100 մետր բարձրության: Այս ծառը լայն տարածված է Թրիլիսի քաղաքի փողոցներում, վորտեղ նա իրեն լիովին արգարացրել է: Յերևանի պլանաններում այդ տեսակը ներկայումս փորձվում է: Այնուհետև, այստեղ կա Լավսոնի նոճու բրգաձև փոփոխակը (Chamaecyparis Lawsoniana v. pyramidalis)—չափազանց գեղեցիկ ծառ է և իր արտաքին տեսքով հիշեցնում է բրգաձև նոճի, բայց վերջինից սարբերվում է իր ցրտակայունությամբ, հետևվապես և իր պիտանիությամբ, այն վայրերի համար, վորտեղ դաժան ձմեռ է լինում: Այդ ծառի հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է: Այնուհետև նույն տեղում կա Հյուսիսային Ամերիկայի արևմտյան տույա, վորն այստեղ ներկայացված է պարսեզային յերկու ձևով՝ բրգաձև (Thuja occidentalis var. pyramidalis) և գլոբոզաձև (Thuja occidentalis var. globosa): Այնուհետև այստեղ կան գետի մայրի (Libocedrus decurrens), ծագումով Հյուսիսային Ամերիկայից, և որիզինալ ճապոնական տույիվիկ (Thujopsis dolabrata):

№ № 27 և 97 կվարտալների արտաքին սահմանների ուղղությամբ տնկված է յուկկա (Jycca filamentosa): Սա շատ որիզինալ հյուսիս-ամերիկյան բույս է՝ շուշանագգիչների ընտանիքից, վորը ծաղկում է խոշոր գեղեցիկ ծաղիկներով, բարձր ծաղկացողունների վրա: Հիմալայան մայրի խմբերում տնկված է կենու կամ կարուրածառի (Taxus baccata) մի քանի որինակ: Այս ծառ-

աչքի յե ընկնում իր շատ դանդաղ աճեցողությամբ և չափազանց ամուր ու կայուն բնափայտով: Ներկայումս այդ ծառը վայրի ձևով աճում է Հայաստանի վորոշ անտառներում, գլխավորապես Դիլիջանի շրջանում: Մի քանի հարյուր տարի սրանից առաջ կենին Հայաստանում ավելի լայն տարածում ուներ և ներկայացված էր շատ խոշոր որինակներով: Հին յեկեղեցիներում և այլ շինություններում յերբեմն հանդիպում են կենու փայտից շինված դռներ, վորտեք, ջնայած հարյուրամյակների հնություն ունեն, բայց և այնպես շատ լավ են պահպանվել:

Կենտրոնական ծառուղու չինարների միջև, № № 25 և 94 կվարտալների սահմանների ուղղությամբ տնկված է սովորական յեղենու հատուկ պարսեզային ձևը—Picea excelsa var. compacta:

Կենտրոնական շրջանից շառավղային ուղղությամբ սկսվում են հետևյալ ծառուղիները՝ 94 և 95 կվարտալների միջև ընկած ծառուղին, վորը բարձրանում է դեպի բլուրը և վորի յերկու կողմից տնկված են ամերիկական հացենի—Fraxinus lanceolata և կովկասյան յեղենի—Abies Nordmanniana, № № 26 և 27 կվարտալների միջև ընկած ծառուղին, վորի յերկու կողմից տնկված է ձիակաակ—Aesculus hypocastanum, № № 96 և 97 կվարտալների միջև ընկած ծառուղին, վորը վերջանում է վորքրիկ շրջանով. ծառուղու յերկու կողմից տնկված են դանազան սուբտրոպիկ տեսակներ: Վերջապես, մեծ շրջանից դեպի հյուսիս սկսվում է № 3 մեծ ծառուղին, վոր ձգվում է մինչև Բուսաբանական այգու սահմանը—դա այսպես կոչված «վարդերի և շատրվանների» ծառուղին է: Այս ծառուղու ամբողջ կենտրոնական մասը բռնված է վարդերով: Այստեղ ներ-

կայացված և վարդերի բազմատեսակ դուշների և յե-  
րանգների 200-ից ավելի սորտ:

Վարդերի և շատրվանների ծառուղու սկզբի և վեր-  
ջին մասում տնկված և սպիտակ ակացիա (*Robinia*  
*pseudoacacia*), իսկ կենտրոնական մասում՝ դրա գըն-  
դաձև տեսակը—*Robinia pseudoacacia* var. *umbracu-*  
*lifera* *Bessoniana*: Գնդաձև ակացիան մուստացիա յե,  
վորը բազմացնում են սովորական ակացիայի վրա  
պատվաստելու միջոցով: Բնության մեջ գնդաձև ակա-  
ցիան վայրի ձևով չի հանդիպում: Այդ ձևը չի ծաղ-  
կում և պտուղ չի տալիս: Բազմացնում են պուրակնե-  
րում տնկելու համար, վորտեղ դա շատ բարձր է  
գնահատվում իր սաղարթամասի գեղեցիկ կոմպակտ-  
ձևի պատճառով: Սովորական սպիտակ ակացիան ծա-  
ղումով Հյուսիսային Ամերիկայից է:

Վարդերի ծառուղու այն մասում, վորն ամենից  
մոտ է մեծ շրջանին, սպիտակ ակացիայի ծառերի միջև  
տնկված է գեյցիա (*Deutzia gracilis*)—ամառվա ա-  
ռաջին կեսում գեղեցիկ ծաղկող մի թուփ, և հնդկական  
յեղրեվանի (*Lagerstroemia indica*)—սա մի չափա-  
զանց գեղեցիկ ծաղկող թուփ է, վորն աշնան սկզբին  
ծածկվում է բաց-մանուշակագույն ծաղիկներով:

Վարդերի ծառուղու կողքերից, նրա մեծ շրջանից  
ամենից հեռու գտնվող մասում, № № 39 և 40 կվարտալ-  
ներում տնկված են զանազան ծառերի «լալկան» ձե-  
վերը: Դա այսպես կոչված «լալկան այգին» է: Տըն-  
կարքներն այստեղ դեռ չեն վերջացել և կշարունակվեն  
մի շարք տարիներ, յերբ ձեռք կբերվին և կաճեցվեն  
համապատասխան տնկիներ:

Ծառերի «լալկան» ձևերը մուստացիաներ են, կամ  
խոտորումներ նոր-ձայից, վորոնք բազմացվում են միայն

պատվաստի միջոցով: «Լալկան ծառերի» ճյուղերն  
աճում են անսորմալ, կախվելով դեպի ցած:

Այս նույն հողամասում էլ հետագայում կկենտրո-  
նացվեն զանազան ծառերի բրգաձև տեսակները: Իրանք  
այլ կարգի մուստացիաներ են, այն է՝ անսորմալ բույ-  
սեր են, վորոնց ճյուղերը ձգվում են դեպի վեր, վորով  
ամբողջ ծառն ստանում է նեղ բուրգի կամ սյունա-  
նման ձև:

Այդու այցելու «լալկան» ձևերից այստեղ կարող է  
ծանոթանալ «լալկան» թթենուն—*Morus alba* var.  
*pendula*, «լալկան» հացենուն—*Fraxinus excelsior*  
var. *pendula*, «լալկան» կնձենուն—*Ulmus hollandica*  
var. *pendula* և «լալկան» նոճուն—*Chamaecyparis pi-*  
*sifera* var. *filifera*: Այնուհետև այստեղ կան լալկան թը-  
փեր, այսինքն կախվող գազաթով, ինչպես որինակ՝ հաս-  
միկը—*Jasminum nudiflorum*—սա դեկորատիվ թուփ  
է, վորը ծաղկում է վաղ գարնանը, ունենում է դեղին  
ծաղիկներ, Վիլսոնի ծորենին—*Berberis polyantha* var.  
*Wilsoni*, կանտոնյան ասպիրակը—*Spirea cantonien-*  
*sis*: Վերջինս հետաքրքրական է նրանով, վոր ձմեռը  
նրա թփերի վրա յերկար ժամանակ մնում են կար-  
մրավուն յերանգավորված տերևները: Այսպիսի բույ-  
սերը կոչվում են «ձմռա-կանաչ»:

№ № 39 և 40 կվարտալների արտաքին յեղրերին  
տնկված է չինական գնդաձև կիպրոսը (*Ligustrum si-*  
*nense*): Այժմ այդ նույն տեղում են գտնվում բրգաձև  
թթենին—*Morus alba* var. *pyramidalis*, գնդաձև բնա-  
վոր թթենին—*Morus alba* var. *globosa*, բրգաձև  
նոճին—*Chamaecyparis Lawsoniana* var. *pyramidalis*,  
արևմտյան տուլայի մի քանի ձևեր, յուզկա և մի  
քանի այլ ծառաթփային բույսեր:

Վարդերի ծառուղու վերջում, № 41 կվարտալում գտնվում են հետևյալ բույսերը՝ լալկան ուռենի—*Salix alba var. vitellina pendula*, բուզեյայի զանազան տեսակները, այնուհետև ազալիսենների (*Verbenaceae*) ընտանիքին պատկանող թփուտներ—*Vitex Agnus Castus*, վորի պտուղները տաքդեղի հոտ ունեն և գործ են անում վորպես սև տաքդեղի սուբստանցիա կամ փոխարինող, *Vitex Negundo*—գեկորատիվ թուփ, կարիսպտերիսինկանա—*Caryopteris incana*, ամերիկական կալիկարպա—*Callicarpa americana*—գեկորատիվ թուփ, վորը գեկորատիվ և վոչ թե ծաղիկներով, այլ պտուղներով աշնանը դրա ճյուղերը ծածկված են լինում բազմաթիվ մանր վառ-մանուշակագույն պտուղներով: Վերջապես, № № 14 և 42 կվարտալների սահմանի վրա, փոքր շրջանով տնկված և արևմտյան տույայի բրգանման ձևը:

Վարդերի ծառուղուց դեպի արևմուտք գտնվում և այսպես կոչված «շրջան-աստղը» (№ 15 կվարտալ): № 15 կվարտալի կենտրոնում մի սոճու շուրջը տնկված և սարադան—*Cotinus Coggygria* (*Rhus cotinus*): Դա յերաշտակայուն թուփ է, վորը գործ է անում սափաստանային շրջաններում՝ անասունամիլիորացիայի մեջ: Այս բույսն ունի նաև տեխնիկական նշանակություն, վորովհետև դրա տերևները պարունակում են դարբաղանյութ և գործ են անում կաշի դարբաղելու համար: Իր շատ զեղեցիկ ծաղիկների շնորհիվ այս թուփն ոգտագործվում է վորպես գեկորատիվ տեսակ նաև պուրակային շինարարությունից մեջ «կեղծամածառ» (*Perrückenbaum*) անվան տակ:

Սարադանը վայրի ձևով աճում է Հայաստանում, Ախթալայի, Իջևանի և այլ շրջաններում բուսելով հա-

րավային ժայռոտ լանջերը բոխու, դիհու և այլ տեսակների հետ:

Այդ շրջանի արտաքին յեղրով հիբրիդ գերմանական հիբրիկի (*Iris germanica Hybrid*) շրջանային յերկու շարքերի միջև տնկված և դափնակեռասի (*Prunus Laurocerasus*) մշտադալար մի թուփ, վորը վայրի ձևով աճում է արևմտյան Վրաստանում, Հյուսիսային Կովկասում և այլուր:

№ 15 կվարտալի շրջանագծի ուղղությամբ կան 5 կանաչ հատվածներ: Յուրաքանչյուր հատվածի մեջտեղում տնկված է տերևաթափ սուլանժի կղբու (*Magnolia Seulangiana Hor.*) մեկ ծառ: Այս կղբին շատ էֆֆեկտավոր գեկորատիվ մի ծառ է, ունենում է խոշոր սպիտակ ծաղիկներ, վորոնք շատ նման են, Սեվ ծովի ափի համար սովորական, մշտադալար կղբուն (*Magnolia grandiflora*), բայց վերջինիս համեմատությունը սուլանժի կղբին ավելի ամուր է և լավ է դիմանում ձմռան ցրտերին: Կղբու շուրջը տնկված են զանազան գեկորատիվ թփեր, իսկ այդ հատվածի յեղբերին տնկված արևելյան կոմպակտ տույայի յերիտասարդ ծառեր, վորոնց այցելուն արդեն ծանոթացել է այգու մյուս բաժիններում:

№ 15 կվարտալից դեպի դուրս, № № 4, 9, 13, 18, 20, 21 կվարտալներում կան նույն սուլանժի կղբու և մեկ շարք ճապոնական թղիու (*Acer palmatum*) տնկիներ: Այս ծառը ծագումով ճապոնիայից է, աչքի յե ընկնում շատ գեկորատիվ տերևներով: Թղիկների իջև տնկված են մշտադալար ճապոնական կիպրոսի *Ligustrum japonicum*) թփեր: Ավելի հեռու յեղբերին տնկված է ճապոնական ծաղկային բալի «հիսակուրա» սորաի (*Prunus serrulata var. Hisakura*) մեկ շրջա-

նաձև շաքր: Այս մասը միայն դեկորատիվ արժեք ունի, շնորհիվ իր շատ խոշոր լիաթերթ ծաղիկների: Զանազան սորտերի դեկորատիվ բալերը շատ տարածված են Ճապոնիայում: Ճապոնական բալերի ծաղիկները հանդիսանում են ճապոնական ազգային ծաղիկներ: Ճապոնիայում այս բալերի ծաղկման շրջանում հատուկ ազգային տոն են կատարում: Ճապոնական բալերը ծաղկում են գարնանը: Սուլանժի կղզին ծաղկում է ամռան սկզբին: Հենց այստեղ էլ կան նաև գնդաձև բնավոր թթենու և մի քանի այլ բույսերի տնկիներ:

«Շրջան-աստղի» կենտրոնական մասից շառավղային ուղղությամբ սկսվում են վեց ծառուղիներ: Իրանցից մեկին (№ 2 ծառուղուն), վորն անցնում է № № 4—18 կվարտալների միջով և տնկված է սոփորայով, ինչպես նաև № № 18—20 կվարտալների միջև գտնվող ձիակակի փոքրիկ ծառուղուն այցելուն արդեն ծանոթացել է: № 4 ծառուղու յերկու կողմում տնկված է բրդաձև բարդի (*Populus nigra* var. *pyramidalis*): № 5 ծառուղին, № № 13 և 21 կվարտալների միջև, տնկված է միատերև հացենիով: Դա սովորական հացենու (*Fraxinus excelsior* var. *monophylla*) շատ որիզինալ մուտացիայի, հացենու համար աննորմալ տերևներով: Սովորական հացենու տերևները բարդ փետրաձև են, միատերև հացենու տերևները պարզ են, մեկական: Միատերև հացենին տալիս է բրդաձև բարձր ծառեր և աչքի յե ընկնում իր արագ աճով: Դա շատ արժեքավոր պուրակային տեսակ է:

Միատերև հացենու ծառերի միջև տնկված են հոտավետ կամ կանազական սպարախի (*Rhus aromatica*) թփեր: Դա դեկորատիվ թուփ է, ծագումով Հյուսիս-



Heracleum-ի վայրի տեսակը Բուս. այգում.

սային Ամերիկայից, հոտավետ տերևներով, վորտեղից  
և առաջացել է նրա անունը:

Այդ ծառուղու կողքերից բաժանվում են յերկու  
ծառուղի՝ անկված ամերիկական հացենիով (*Fraxinus*  
*pensilvanica*): Տեղ-տեղ վրան պատվաստված է պտե-  
րատերև հացենու (*Fraxinus excelsier* var. *aspleni-*  
*folia*) հատուկ պարտեզային ձևը՝ շատ նեղ զեղեցիկ  
տերևներով: Այստեղ հացենիները միջև անկված է խո-  
շորափուռ սզնի (*Crataegus macracantha*), ծագումով  
Միբրից:

Բուսաբանական այգու հյուսիսային սահմանի ուղ-  
ղությամբ, № 1 կվարտալում կան բրզաձև բարդու  
(*Populus nigra* var. *pyramidalis*) անտառի նման հա-  
մատարած անկարքներ, իսկ այդ կվարտալի արևելյան  
մասում՝ կանադական բարդու (*Populus canadensis*)  
անկարքներ: Բրզաձև կամ իտալական բարդին ծագել  
է Կենտրոնական Ասիայում, բայց մեղ մոտ բերված է  
Իտալիայից: Դա բարդու այն տեսակն է, վորն ամե-  
նից ավելի յե տարածված Հայաստանում և առհասա-  
րակ ամբողջ Յեվրոպայում: Կանադական բարդին հան-  
դեսանում է սև ու բալասանային բարդու հիբրիդ  
(բալասանային բարդու մի քանի որինակներ կան  
Հայաստանի տեղական Ֆլորայի բաժնի տերիտորիա-  
յում) և հանդես է գալիս վորպես բարդիների ամենա-  
արագ աճող և միևնույն ժամանակ քիչ պահանջկոտ  
փոփոխակներից մեկը:

Այնուհետև, № 41 կվարտալի տերիտորիայի վրա  
այցելուն գտնում է շագանակատերև կաղնու (*Quercus*  
*castaneifolia*) յերիասարդ անտառ: Դա կաղնու շատ  
հետաքրքիր տեսակն է, վորը տարածված է Իբրանում  
և Անդրկովկասում՝ Թալիշում: Այս կաղնու տերևներն

իրենց ձևով նման են շագանակի տերևներին: Դա շատ  
արագ աճող և չափազանց զեկորատիվ ծառ է:

№ 8 ծառուղին, վորն անցնում է № № 44 և 56 կվար-  
տալների միջով և ապա զեպի այգու արևելյան սահ-  
մանը, անկված է յեղրեկենատերև կատալպայով (*Catalpa*  
*bignonioides*): Դա շատ զեկորատիվ ծառ է, ծագումով  
Հյուսիսային Ամերիկայից, խոշոր տերևներով և գեղե-  
ցիկ հոտավետ ծաղիկներով:

№ № 36, 37 և 33—34 կվարտալների միջև անցնող  
ծառուղին անկված է խայտարդետատերև ամերիկական  
թղկիով: Այս ծառն արհեստական ձևով ստացված  
պարտեզային տեսակ է, բազմանում է միայն պատ-  
վաստով: Ամերիկական թղկու խայտարդետատերև  
ձևերը, իրենց տերևների մեջ սովորական թղկուց ավե-  
լի քիչ խլրոֆիլ են պարունակում, վորի հետևանքով  
ավելի դանդաղ են աճում, բայց իրենց գեղեցիկ տե-  
րեվների շնորհիվ լայն կիրառում են գտնում պուրա-  
կային շինարարության մեջ: Այստեղ այցելուն հնա-  
րավորություն ունի ծանոթանալու խայտատերև թղկու  
յերկու ձևերի—սպիտակախայտ ամերիկական թղկի  
(*Acer Negundo* var. *argenteo-variegata*) և դեղնա-  
խայտ ամերիկական թղկի (*Acer Negundo* var. *aureo-*  
*variegata*):

Խայտատերև թղկու ծառուղով այգու այցելուն վե-  
րադառնում է զեպի մեծ շրջանը և այստեղից չինարու  
գլխավոր ծառուղով (խճուղի) դիմում է զեպի Բու-  
սաբանական Ինստիտուտի շենքը:

№ № 29, 30, 79, 98 և 99 կվարտալները, վորոնք  
գտնվում են խճուղու յերկու կողմում, բռնված են յե-  
րիասարդ պուրակային անկարքներով: Ծառաբույսերն  
այստեղ ներկայացված են գլխավորապես փշատերև

տեսակներով, վորոնցից այստեղ կա արևելյան կոմպակտ տուլյա, հիմալայան մայրի, կովկասյան սոճի (Pinus hamata D. Sosn.) և Ղրիմի սոճի (Pinus Laricio var. Pallassiana): Կովկասյան սոճին—գա Անդրկովկասի սովորական անտառային սոճին է: Հայաստանում նա սոճու անտառներ է կազմում Շահալու, Դիլիջանի և այլ շրջաններում: Ղրիմի սոճին վայրի վիճակում աճում է Ղրիմում և հանդիսանում է սև կամ ավաբրիակա սոճու մի անանձին փոփոխակը: Այնուհետև ծառաբույսերից այստեղ կան ամերիկական թղկին, ամերիկական հացենին, սպիտակ ալացիան, ինչպես նաև այսպես կոչված «ոճառածառը» (Kaelreuteria paniculata), վորը ծաղկում է ամռանը՝ գեղեցիկ դեղին ծաղիկներով: Այստեղ է տնկված նաև մետաքսյա ալացիան (Albizia Julibrissin), վորը վայրի ձևով աճում է Անդրկովկասում (Թալիշում): Մեղ մոտ այդ ծառը խիստ ձմռանը ցրտահարվում է մինչև հողի մակերեսը, բայց բնի վզիկից հետագայում նոր ընձյուղներ է տալիս, այդ պատճառով ել թփի տեսք ունի: Աչքի յե ընկնում չափազանց դեկորատիվ տերևներով: Այստեղ խմբերով տնկված են նաև իրզուլի (Tamarix Pallassiana) թփեր, վորոնք վայրի ձևով բուսնում են Հայաստանում: Այնուհետև այստեղ տնկված են դեղեցիկ ծաղկող դանազան թփեր, ինչպես՝ որինակ՝ թաթարական ցախակեռաս (Lonicera tatarica), դեյցիա, ֆորզիցիա, ամորֆա, համիկ և այլն:

№ 99 կվարտալում, ի միջի այլոց, տնկված է ճեղքատերև կտտկենու կամ թանթրվենու (Sambucus nigra var. laciniata) յերկու թուփ: Դա դեկորատիվ թուփ է մանր կտրված շատ գեղեցիկ տերևներով:

Ջինարի ծառուղու մեջտեղում, կենտրոնական գա-

գոնային շերտի յեզերին, կենդանի ցանկապատի ձևով տնկված է ճապկին (Cornus sanguinea)՝ Հայաստանի անտառներում վայրի ձևով աճող մի թուփ:

Բուսաբանական Ինստիտուտի շենքի մոտ չինարի ծառուղին ընդհատվում է մի «վեցանկյունով», վորը կազմված է արևելյան տուլյայի յերկու գուգահեռ շարքերից՝ տնկված կենդանի ցանկապատի ձևով: Այս ցանկապատի ներսի կողմում կան ծաղկանոցների և գազոնների հողակտորներ, վորոնց վրա տնկված են դանազան դեկորատիվ թփային տեսակներ, այն է՝ մշտադալար տոսախ (Buxus sempervirens), վորը վայրի ձևով աճում է Աբխազիայի անտառներում, ովալատերև կիպրոս (Ligustrum ovalifolium), ինչպես նաև դրա խայտատերև ձևը (L. ovalifolium var. marginatum), դեյցիա (Deutzia scabra), ֆորզիցիա (Forsythia intermedia):

Վեցանկյան կենտրոնում կա ջրավազան: Զրավազանի և վերը նշված ծաղկանոցային մասի միջև կա գազոնի մի ողակ, վորի վրա մի շրջանային շարքով տնկված է ճապոնական կրիպսոմերիայի շքեղագույն ձևը, գանգուր փշատերևով (Cryptomeria japonica var. elegantissima):

Տուլյայի վեցանկյունից դեպի հարավ սկսվում է դեպի «Կասկադը» բարձրացող ծառուղին: Այդ ծառուղու ցածի մասում տնկված են բրգածե բարդիներ և սովորական կիպրոսի (Ligustrum vulgare) կենդանի ցանկապատ: Դա մի թուփ է, վորը վայրի ձևով աճում է Անդրկովկասի դանազան վայրերում, այդ թվում տեղ-տեղ նաև Հայաստանում (Զանգեզուր): Այնուհետև ծառուղու այն մասում, վորը լանջով բարձրանում է դեպի բլրի գագաթը, տնկված է արևելյան

տուլյա: Ծառուղու այդ մասից դեպի յերկու կողմը, յեռանկյան ձևով, ձգվում են կողքի ուղիները: Յածի յեռանկյունները տնկված են սովորական յեղենիով (*Picea excelsa*), իսկ մյուս յերկուսը՝ վիրգինական գիհիով (*Juniperus virginiana*): Դա շատ հետաքրքրական տեսակ է: Իր ցրտակայունության հետ մեկտեղ վիրգինական գիհին աչքի յե ընկնում արագ աճով: Դա ամենաարագ աճող գիհիներից մեկն է: Հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է: Այդ գիհու ընափայտը լայնորեն կիրառվում է մատիտի արտադրության մեջ, ուստի այդ ծառը կոչվում է նաև «մատիտածառ»: Այդ նույն վիրգինյան գիհու ավելի խոշոր որինակները տնկված են յերկու դույզ ցածի յեռանկյունների կենտրոնական մասերում: Կասկադի կատարին, վերին ջրավազանի մոտ, կան բրգածե բարդիներ, ճապոնական կրիպտոմերիայի և մի քանի այլ փշատերև տեսակներ, վորոնք այցելուին արդեն հայտնի յեն այգու մյուս բաժիններից:

«Կասկադը» դիտելուց հետո այցելուն իջնում է ցած, դեպի վեցանկյունը, վորտեղից շարունակում է գնալ կենտրոնական, չինարի ծառուղով, ծաղկային բույսերի ինտրոդուկցիոն բաժնի կողքով դեպի Բուսաբանական այգու ջերմատներն ու ջերմոցները:

Ջերմոցներից ցած գանվում է ծաղկային ինտրոդուկցիոն բաժնի տնկարքների մի մասը, իսկ ավելի ցած, Գեղաու-չայի ափին, ծառաբույսերի կոլեկցիոն հողամասը, վորտեղ այգու այցելուն հնարավորություն ունի ծանոթանալու հետաքրքիր եկզոտների մի ամբողջ շարքի:

Ծառաթփային բույսերի հավաքածուն շարունակ-

վում է № № 85—87 կվարտաներում, վորոնք կից են քարե տերրասներին: Այստեղ յեղած բույսերից կարելի յե նշել կակաչածառի (*Liriodendron tulipifera*) յերիտասարդ որինակները՝ որիգինալ քնարածե տերևներով, մշտադալար փաթաթվող ճապոնական ցալկեռասը (*Lonicera japonica*), ցելաստրուսը (*Celastrus celastrus*)—սա փաթաթվող թուփ է, ծագումով Հեռավոր Արևելքից, Ճավայի սպուբակը (*Rhus javanica*) հետաքրքրական ծառ է, ծագումով Չինաստանից և Ճապոնիայից, հսկայական բարդ փհարածե տերևներով և այլն: Կոլեկցիոն բաժնի դեկորատիվ բույսերից կարելի յե նշել նաև Պիսսարդի սալորը (*Prunus domestica* var. *Pissardii*) մուգ-ձիրանի տերևներով, խայտատերև ամերիկական թղկիները և այլն:

Կոլեկցիոն հողամասերը դիտելուց հետո, այգու այցելուն Գեղաու-չայի ափով անցնող զանազան տեսակ բարդիների ծառուղով կամ քարե սանդուխքով տերրասների միջով բարձրանում, մտնում է այն ծառուղին, վորը տանում է դեպի Բուսաբանական այգու ծառադեկորատիվ տնկարանը: Այդ ծառուղու վրա, հենց ջերմոցների մոտ, տնկված են զանազան ծառեր, դրանց մեջ կան՝ վարդագույն կաչուն ակացիա (*Robinia neomexicana*), ծագումով Հյուսիսային Ամերիկայից, վոր շատ նման է սովորական սպիտակ ակացիային, բայց նրանից տարբերվում է մուգ-վարդագույն ծաղիկներով, կովկասյան կամ կարմիր լոբենի (*Tilia caucasica* կամ *Tilia rubra*), վորը վայրի ձևով աճում է Հայաստանի ցածրադիր անտառային զոնայում, կովկասյան ֆոշնի (*Celtis caucasica*), վորը նույնպես

վայրի ձևով աճում է Հայաստանի ցածր անտառային գոնայում, ուր նրա մանր պտուղները գործ են անվում վորպես ուտելիք, «փրինջի» անվան տակ: Կնձնուկամ դարազաչի խայտատերև ձևը (*Ulmus campestris* var. *pulverulenta*) միայն պատվաստի միջոցով բազմացող մուտացիա յի որիգինալ խայտաբղետ մոզայիկ տերևներով:

Այդ ծառուղով դեպի հյուսիս գնալով այցելում անցնում է ամերիկական թղիու (*Acer negundo*) ծառուղով, Բուսարանական այգու անկարանի սահմանով: Տնկարանում աճեցվում են բազմատեսակ ծառաթփային եկզոտներ, վորոնք ապագայում կանկվեն Բուսարանական այգու դենդրոլոգիկ բաժնում: Այժմ (1940 թվի ամսանը) անկարանում կա 350-ից ավելի, Հայաստանի համար նոր, ծառա-թփային եկզոտների զանազան տեսակներ: Տնկարանին կից կա դենդրոլոգիական ջերմատուն, վորտեղ ցանվում և տնկվում են զանազան ծառա-թփային տեսակներ: Ջերմոցում զարգացման նախապատրաստական շրջանն անցնելով, այնուհետև այդ բույսերը տնկվում են անկարանի տերիտորիայում հողի մեջ (զբոսնոտում):

Թղիու ծառուղուց (սլլանի վրա՝ № 9 ծառուղի) մի կողմ է գնում ամառային կաղնիով (*Quercus Robys*) տնկված № 10 ծառուղին և դրան գուգահեռ, մի քիչ հեռու, սկսվում է կովկասյան սոճիով (*Pinus Laricio* var. *Pallasiana*) տնկված № 11 ծառուղին:

Յերկու ծառուղիների միջև գտնվում է № 53 կվարտալը, վորը բռնված է սոճիով: Սոճին այտեղ ներկայացված է յերեք տեսակով՝ սովորական սոճի, վորը կազմում է Ուկրաինայի, ՌեՅՄՆ-ի, Արևմտյան Յեվ-

րոջայի անտառները, — *Pinus silvestris*, այնուհետև կովկասյան սոճին և, վերջապես, Ղրիմի սոճին:

Կաղնիների ծառուղու և Գեդառ-չայի միջև, № № 69, 70 և 71 կվարտալներում կա յերեք փոքրիկ ծաղկանոց, վորտեղ նույնպես տնկված են մի քանի հետաքրքրական եկզոտներ: Այսպես՝ № 69 կվարտալում տնկված է խայտատերև վեյգելայի (*Weigelia Kasteriana* var. *variegata*) յերկու թուփ, № 71 կվարտալում գտնվում է ճապոնական սերկևիլի (*Chaenomelis japonica*) թփերի մի խումբ — սա դեկորատիվ թուփ է, վորը ծաղկում է վաղ գարնանը՝ գեղեցիկ բացգեղին և վարդագույն ծաղիկներով: Գեդառ-չայ գետի ափին տնկված են ուռենիների և բարդիների զանազան տեսակներ:

ՀԱՅԿ. ԽՍՀ-Ի ՖԼՈՐԱՅԻ ՅԵՎ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Այս բաժնի տերիտորիան գտնվում է այգու կենտրոնական մասում, տափաբակի վրա և «Կասկադի» արևմտյան, հյուսիսային ու արևելյան լանջերին: Գլխավոր սլլանով նախատեսված 16 հեկտար հողամասից մինչև այժմ դեռ շատ քիչ է յուրացված — միայն կեսը:

- Բաժինն ունի յերկու յենթաբաժին.
1. Հայկական ԽՍՀ-ի Ֆլորայի յենթաբաժին (սխտեմատիկական).
  2. Հայկական ԽՍՀ-ի բուսականության յենթաբաժին:

Ֆլորայի յենթաբաժինը հանդիսանում է Հայկական ԽՍՀ-ի յուրատեսակ կենդանի մի հերբարիում, վորն

ունի թե գիտական և թե գիտա-ցուցադրական նշանակութիւնն: Ընդամենը 3 տարվա ընթացքում Հանրապետութեան զանազան շրջաններէց այստեղ արդեն հավաքված և ավելի քան 350 տեսակ բույս: Հայաստանի Ֆլորայի կենդանի արշականները կարող են տեղեկատու և համեմատական նյութ ծառայել սիստեմատիկայի աշխատանքներին համար, ինչպես նաև մի շարք գիտական թեմաներ մշակելու համար: Յենթարածինը հիանալի տեղ և հանդիսանում բույսերի մորֆոլոգիան ու սիստեմատիկան դասավանդելու և ուսումնասիրելու համար: Ամբողջ յենթարածնի տերիտորիան բաժանված է յերեք մասի: Իր տարածութեամբ ամենից մեծ է այն մասը, վոր հատկացված է խոտային և կիսաքիւփային տեսակներին: Այդ ամբողջ հողամասը խոշոր ու մանր ծառերի և ուղիներիով և ուղիներով բաժանված է կուրտինաների: Յուրաքանչյուր կուրտինայում հավաքված են միայն վորոշ բուսաբանական ընտանիքների տեսակներ: Ընտանիքների սահմաններում տեսակները դասավորված են Ենդերի սիստեմով: Յուրաքանչյուր տեսակին հատկացված է 2,5-ից մինչև 5 քառ. մետր տարածութիւն, և այսպիսով, հնարավոր է յեղել մարգում ներկայացնել բույսի ավյալ տեսակից վոչ թե մեկ կամ յերկու որինակ, այլ դրանց մի զգալի քանակութիւնն (միջին թվով 15—20 բույսից վոչ պակաս): Յուրաքանչյուր մարդ ունի ետիկետ, վորի վրա, բացի բույսի անունից, գրված է նաև նրա տեման վայրը բնական պայմաններում, կյանքի տեվողութիւնը և բույսի արտադրական նշանակութիւնը սոցիալիստական ժողովրդական տնտեսութեան համար: Հողամասի կենտրոնում կա մի լճակ, վորը ձևավորված

է Սեվանա լճի նմանութեամբ: Լճակի մեջ և նրա ափերին տնկված են Հայաստանի ջրա-ճահճային Ֆլորայի բույսեր: Հողամասի առանձին մասերում պատրաստված են գեղորատիվ կուլմբաներ, վորոնց վրա տնկված են Հայաստանի Ֆլորայի գեղեցիկ ծաղկող ներկայացուցիչներ: Յենթարածնում ներկայացված են սուբարկյան և արկյան Ֆլորայի շատ տեսակներ: Դրանց մեջ շատ կան արժեքավոր կերարույսեր և խոտարույսեր, վորոնք կարող են մեծ նշանակութիւն ունենալ ինչպես դաշտային, այնպես և մարգագետնային կուլտուրայի մեջ: Կան կիսատափաստանների ու տափաստանների քսերոֆիտ Ֆլորայի և լեռնային քսերոֆիտների շատ ներկայացուցիչներ: Շատ կան վայրի գեղորատիվ, գեղեցիկ ծաղկող բույսեր, յեթեբարտու, ներկատու բույսեր և այլն:

Ստորաբույսերի հողամասերի բոլոր կուրտինաները համարակալված են: Դիտումը պետք է սկսել № 1 կուրտինայից (ձարխոտանմաններ կամ պտերանմաններ) և ավարտել № 19 կուրտինայով (բարդ-ձաղկավորներ):

Սիստեմատիկայի յենթարածնի մյուս յերկու մասերը հատկացված են թփերին և ծառաբույսերին: Այս հողամասի ձևավորումն սկզբունքորեն այլ է, քան խոտարույսերի վերը նկարագրված հողամասին: Ծառերը և թփերը ներկայացված են ծառուղային տնկումների սկզբունքով: Ծառերի և թփերի յուրաքանչյուր տեսակն ունի ետիկետի և ներկայացված է չորս որինակով: Դա այցելուին հնարավորութիւն և տալիս այդպիսի ծառուղիներով անցնելիս միեւնույն տեսակի որինակները տեսնել ծառուղու յերկու կողմից, դրանով իսկ հեշտութեամբ համեմատել առանձին տեսակները

միմյանց հետ, նրանց աճման բնույթը, արտաքին տեսքը և այլ առանձնահատկությունները: Բոլոր ծառուղիները համարակարգված են, և դրանք պետք է դիտել ըստ համարների կարգի: Ներկայումս այդ հողամասերում տնկված է ծառերի և թփերի 72 տեսակ, վորոնց մեջ շատ կան Հայկական ԽՍՀ-ի վայրի և կուլտուրական ֆլորայի հետաքրքրական ներկայացուցիչներ:

Հայկական ԽՍՀ-ի բուսականության յեմքարաժինը նպատակ ունի ցուցադրել յերկրի բուսական ծածկոցի հիմնական քսերոֆիլ տիպերը: Հետագայում յենթաբաժնի տերիտորիայում պետք է ներկայացվեն բուսական ծածկոցի այն տիպարները, վորոնք Հայաստանի պայմաններում ունեն լանդշաֆտային նշանակութուն, բնական պայմաններում բուսում են մեծ տարածություններ և, հետևապես, ժողովրդական տնտեսության համար կարևոր են: Տիպարները ձևավորվում են կենտրոնական բլրի լանջերին, իրենց զոնալ արտահայտությունը, այդ նպատակով լանջերի ստորին մասերը բուսվում են ավելի շատ քսերոֆիլ տիպարներով, վորոնք հատուկ են Հայաստանի ցածրադիր շրջաններին, իսկ լանջերի վերին մասերը հատկացված են միջին լեռնային և անտառային զոնայի տիպարներին: Բոլոր հողամասերն ունեն գեղեցիկ ձևավորված ուղիներ և ծառուղիների ցանց՝ բազմաթիվ ցուցանակներով և մանրամասն բացատրական մակագրություններով, վորոնք բնորոշում են ներկայացված տիպարների հիմնական առանձնահատկությունները և նրանց ժողովրդատնտեսական նշանակությունը:

Ներկայումս յենթաբաժնի տերիտորիայի վրա ձևավորված են հետևյալ հողակտորները:

Ոշինդրային կիսաանապատը ներկայացված է իր տիպիկ արտահայտությունը՝ բնորոշ եղիֆիկատորով— Յերեվանի ոշինդրով (*Artemisia erivanica* Bess.), գարնանային եֆեմեր ֆլորայով, ոշինդրի հետագա լրիվ գերակշռությունը և կիսաանապատային զոնայի դրան ուղեկցող այլ քսերոֆիտներով: Ոշինդրային կիսաանապատը Հայկական ԽՍՀ-ի ցածրադիր զոնայում հանդիսանում է ձմեռային արոտատեղերի հիմնական տիպերից մեկը: Յերևանի ոշինդրը վոշխարները լավ են ուտում, բացի այդ՝ նա յեթերայուղատու բույս է, վորը պիտանի յե կամֆարային (քյաֆուրի) յուղ ստանալու համար: Ոշինդրային կիսաանապատը մեզ մոտ ձևավորված է 0,5 հեկտար տարածություն վրա:

Կիսաանապատային բուսականության յերկրորդ տիպարը, վորի ձևավորումն արդեն սկսված է— դա հազարատերևուկի կիսաանապատն է: Դա շատ յուրահատուկ տիպար է և հանդիպում է բացառապես Արաքսի հովտում: Եղիֆիկատոր է հանդիսանում չափազանց որիգինալ մի յսամեֆիտ— *Achillea tenuifolia* Lam., վորը լրիվ կերպով գերակշռում է վերերկրյա բուսականության մեջ: Հազարատերևուկի կիսաանապատին հատկացրած ամբողջ տարածությունը կկազմի 0,5 հեկտ.: Ներկայումս այդ հողամասի վրա տնկված է *Achillea tenuifolia*-ի 500-ից ավելի թուփ: Այս բույսն անասունները լավ են ուտում, բացի գրանից, կարող է ոգտագործվել նաև վորպես զեկորատիվ բույս: Անտառային տիպարներից յենթաբաժնում ներկայումս ներկայացված են անտառի յերեք տեսակ (կաղնու, սոճու և գինու):

Հայկական ԽՍՀ-ի կաղնու անտառներից առայժմ ձևավորվում է անտառի լեռնային կաղնու (*Quercus macranthera* F. et M.) բաժինը: Անտառի այս տեսակն ամենից շատ տարածված է Հայաստանի վերին զոնայում և արտադրական տեսակետից հանդիսանում է հանրապետություն անտառային ծածկուցի մի շատ կարևոր տեսակը: Լեռնային կաղնին տալիս է հիանալի փայտանյութ շինարարության և ատաղձադորձական աշխատանքների համար, արժեքավոր հումույթ՝ կաշիների դաբաղման համար և, վերջապես, տալիս է արժեքավոր սննդանյութ—կաղին: Լեռնային կաղնին միևնույն ժամանակ շատ յերաշտակալուն ծառ է, վորը պիտանի յե լեռների չոր ու քարքարոտ լանջերը կանաչազարդելու համար: Այդ անտառային հողամասը ձևավորված է 1,5 հեկտ. տարածություն վրա, վորտեղ տնկված է 1200 կաղնու ծառ և նրան ուղեկցող անտառային մի շարք այլ տեսակներ:

Սոնու անտառը *Pinus hamata* D. Sosn.-ից ներկայացված է 1,5 հեկտ. տարածությամբ: Հայկական ԽՍՀ-ում սոճու անտառները հանդիպում են Դիլիջանի շրջակայքում և Արավիզու շրջանում: Սոճու անկարքներն ամենից մեծ տարածություն բռնում են Գյուլագարակ գյուղի շրջակայքում (Ստեփանավանի շրջան): Հայկական ԽՍՀ-ի սոճու անտառները, չնայած իրենց բռնած փոքր տարածությունը, կարևոր ժողովրդաստեղծական նշանակություն ունեն: Առանձնապես մեծ է դրանց նշանակությունն ատոլջապահության գործում, վորովհետև սոճու անտառները հանդիսանում են կուրորտային անտառներ: Ներկայումս հողամասում տնկված է 2000-ից ավելի 4—5 տարեկան սոճի:

Բլրի գագաթին սկսած է գիհու փոքր անտառի ձև-



Ծառուի  
*Tamarix.*

վալորումը ծառանման գիհուց—Juniperus polycarpus C. Koch. և J. foetidissima W.: Ներկայումս անկված է գիհու մոտ 200 ծառ: Գիհու բոլոր տեսակները մեծ նշանակություն ունեն շատ չոր, քարքարոտ լանջերը կանաչազարդելու համար: Բացի դրանից, գիհին արժեքավոր հումուլթ է ապլիս մատիտի և յեթերա-յուզային արդյունաբերություն համար:

### ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԾԱՂԿԱՌՈՒԾՈՒ- ԹՅՈՒՆԸ

Բուսաբանական այգին իրեն նպատակ է դրել կազմել ծաղկաբույսերի ըստ հնարավորին լրիվ հավաքածու, վորպեսզի, այնուհետև, այդ նյութի հիման վրա սկսի կազմակերպել վորձա-ցուցադրական ծաղկանոցներ, վորտեղ յուրաքանչյուր նոր բույս կիրառություն ունենա այն ձևով, վոր ամենից լավ դրսևորվեն ավյալ բույսի դեկորատիվ առանձնահատկությունները: Ներկայումս նոր ծաղկաբույսերն անցյվում և վորձարկվում են «ծաղկաբույսերի ինտրոդուկցիոն բուժարանում», վոր հիմնականում բուժում է Բուսաբանական այգու № 103 կվարտալը: Բացի դրանից, նոր ծաղկանոցների մի մասը անկված է Չերմոցներին կից հողամասերում (№ № 58—91 կվարտալներում): 1940 թ. Բուսաբանական այգու ծաղկաբույսերի ինտրոդուկցիոն հողամասերում և ծաղկանոցներում ներկայացված են մինչև 1000 անուն դանազան ծաղկաբույսեր: Ծաղկաբույսերի ինտրոդուկցիոն հողամասերից բացի, Բուսաբանական այգու դանազան մասերում ցրված են առանձին ծաղկանոցներ, վորտեղ անկված են այս կամ այն չափով սովորական ծաղկաբույսեր, սակայն, ծաղ-

կանոցները պատրաստելիս ըստ հնարավորին ոգտագործվել են ծաղկանոցային ձևավորումները դանազան ձևեր ու մեթոդներ: Ծաղկանոցներ կան Բուսաբանական Ինստիտուտի շինքի մոտ (№ 81 կվարտ.), մեծ շրջանի վրա, «Կասկադի» վրա, ոգտակար բույսերի բաժնում, № № 69—71 կվարտալում և այլ տեղերում:

Բուսաբանական այգին իր ծաղկաբույսերի հավաքածուի մեջ այժմ ունի ավելի քան 100 սորտ գեորգին, 35 սորտ գլադիոլուս, 20 սորտ ճապոնական հլրիկ (Iris Kaempferi), 20 սորտ խրիզանթեմ, մոտ 40 սորտ միամյա աստրա և բազմամյա ծաղկաբույսերի շատ հարուստ հավաքածու: Տեղի սղություն պատճառով հնարավոր չէ մանրամասն նկարագրել Բուսաբանական այգում անցյվող ծաղկաբույսերի բազմաթիվ սորտերը: Ծաղկային կուլտուրական Ֆլորայի ամբողջ հարստությունն այցելուն կարող է ամենից լավ ծանոթանալ տեղում, բնականում դիտելով Բուսաբանական այգու ծաղկանոցները և ինտրոդուկցիոն ծաղկային պլանտացիաները:

### ՍՈՒԿՈՒԼԵՆՏՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍ

№ 101 կվարտալում գտնվում է սուկուլենտների հողամասը («մեքսիկական բլուր»): Այստեղ հավաքված են այսպես կոչված «սուկուլենտ» հանդիսացող բույսերի ոտարերկրյա ներկայացուցիչները: Սուկուլենտները մասլի, հյութալի վեգետատիվ օրգաններ ունեցող բույսեր են, վորոնք մեծ մասամբ անապատների և կիսաանապատների բնակիչներ են: Սուկուլենտներն օրինակ են այն բանի, թե ինչպես կարող է բույսը հարմարվել յերաշտի պայմաններին: Անձրևներ-

բի շրջանում սուկուլենտները մեծ քանակութեամբ խոնավութեամբ են կլանում, վորը, իբրև պաշար, պահվում է նրանց վեգետատիվ սրգաններում. դրա շնորհիվ սուկուլենտները կարող են ազատ կերպով դիմանալ յերկարատև յերաշտին: Սոնավութեան դոլորչիացումը վեգետատիվ սրգանների մակերեսից, նույնպես թույլ է կատարվում: Սուկուլենտների հողամասում ներկայացված են հետևյալ բույսերը.

1. Կակտուսների (*Cactaceae*) ընտ. ներկայացուցիչները: Այս բույսերը ծագում են գլխավորապես Մեքսիկայից և Միջին Ամերիկայի յերկրներից: Կակտուսների մեծ մասը զինված է սանդղերով (փշերով), վորոնք պաշտպանում են նրանց անասուններից: Կակտուսներից մի քանիսը մշակվում են Ամերիկայի սուբտրոպիկ և տրոպիկ շրջաններում, Միջերկրական ծովի շրջաններում և այլ վայրերում՝ կենդանի ցանկապատի համար: Կակտուսներն ունենում են մեծ մասամբ շատ խոշոր և գեղեցիկ ծաղիկներ: Մեզ մոտ կակտուսները ծաղկում են ամառը, հուլիս-ոգոստոս ամիսներին: Կակտուսներից մի քանիսն աչքի յեն ընկնում ցրտակայունութեամբ և Յերևանի պայմաններում կարող են ձմեռել հողի մեջ, բայց Բուսաբանական այգում մշակվող տեսակների մեծ մասը ձմեռը պետք է տեղափոխել ջերմոցները: Կակտուսների ընտանիքից մեր Բուսաբանական այգում ներկայացված են հետևյալ ցեղերի զանազան տեսակները՝ ոպունցիա (*Opuntia*), էխինոպսիս (*Echinopsis*), մամիլարիա (*Mamillaria*) և այլն:

2. Ագավանի (*Agave*): Այս բույսերը *Amaryllidaceae* ընտանիքից են, ծագում են Միջին և Հյուսիսային Ամերիկայի յերկրներից: Իրենց ղեկորատիվութեան

շնորհիվ լայն կիրառում են գտնում այգիներում և պուրակներում: Ագավաներն աչքի յեն ընկնում իրենց շատ սակավ ծաղիկով: Այստեղ, որինակ՝ ամերիկական ագավան (*Agave americana*) ծաղկում է միայն մի քանի տասնյակ տարեկան դառնալուց հետո (ըստ հավատալիքի՝ 100 տարեկան), վորից հետո բույսը պտուղ է տալիս և մեռնում:

3. Ալոն (*Aloë*): Բուսաբանական այգում կան ալոնի մի քանի տեսակներ, վորոնք ծագում են Հարավային Աֆրիկայի յերկրներից: Ալոնն պատկանում է շուշանագգիների ընտանիքին: Ալոնն լայն հասարակութեան մեջ յերբեմն հայտնի յե «հարյուրամյա» անունով: Սակայն այդ անունը յերբեմն տրվում է նաև այլ սուկուլենտների: Ամառը Բուսաբանական այգում կարելի յե տեսնել ծաղկած ալոն:

4. *Mesembrianthemum* ցեղի զանազան ներկայացուցիչներ: Իրանք մեծ մասամբ ցածր փոված բույսեր են, ծագումով Աֆրիկայից: Մեղմբերիանթեմումի մի քանի տեսակներն ունենում են գեղեցիկ ծաղիկներ և ոգտադործվում են ծաղկաբուծութեան մեջ: Մեղմբերիանթեմումը պատկանում է *Aizoaceae* ընտանիքին:

Սուկուլենտների այս չորս հիմնական խմբից բացի, մեր հավաքածուի մեջ ներկայացված են նաև շատ այլ սուկուլենտներ: Իրանց թվում առանձին ուշադրութեան արժանի յե փոքրիկ, բայց որիգինալ ստապելիա (*Stapelia variegata*) բույսը: Շատ որիգինալ են այս ընտանի ծաղիկները, վորոնք հնգաթև վառ աստղի տեսք ունեն: Այս բույսը փոշոտվում է դիանոնձերի կողմից, սրա ծաղիկները լեշի անախորժ հոտ ունեն, վորը գրավում է ձանձերին:

Բուսական հումուլթի սեկտորի հողամասը գտնվում է ողբերկութաբանական կայանի և տնկարանի միջև։ Հողամասի ընդհանուր տարածութունը մոտ մեկ հեկտար է։ Բուսական հումուլթի սեկտորի հողամասի աշխատանքների հիմնական ուղղութունը կազմում են Հայկական ԽՍՀ-ի վայրի Փլորայից հայտնաբերված այն բույսերի ազդրերի ուղիղական ու քիմիական ուսումնասիրութունը Բուսաբանական այգու պայմաններում, վորոնք պիտանի հումուլթ են տալիս արդյունաբերության մի շարք ճյուղերում (սննդի, տեքստիլ, պարֆյումեր և այլն) ոգտագործելու համար, ինչպես նաև վայրի Փլորայից բույսերի նոր տեսակներ վերարտադրելը և դրանք գյուղատնտեսության պրակտիկայի մեջ մտցնելը։

Այստեղ վայրի բույսերի հետ մեկտեղ ուսումնասիրվում են նաև մի քանի կուլտուրական բույսեր, վորոնք վաղուց արդեն մշակվում են այլ յերկրներում, բայց Հայկական ԽՍՀ-ի պայմաններում կամ նոր կուլտուրաներ են կամ դեռ ևս չեն մշակվում, սակայն հետագայում կարող են մեծ նշանակութուն ունենալ։ այդ կարգի բույսեր են, որինակ՝ հոտավետ կամ վարդագույն խորդեմիկ, դալմաթյան յերիցուկը, տանգուտական յավարծիլը, կասսիան, կառչուկատուների, տեխնիկական, սննդատու և այլ բույսերի գանազան տեսակները։

Բուսական հումուլթի սեկտորի հողամասը հիմնականում ծառայում է Հայկական ԽՍՀ-ի ցածրադիր շրջանների համար առավել արժեքավոր առանձին բույսերի ինտրոդուկցիայի և հատուկ ուսումնասիրության

ուղղությամբ գիտական փորձեր կատարելու գործին։ Ամենից հարմար է բուսական հումուլթի հողամասն անցնել ողբերկութաբանական կայանի կողքով, այլանի ծառուղով։ Անցնելով ողբերկութաբանական կայանը, աջ կողմում, նոր յուրացրած հողամասի վրա կարելի յէ տեսնել յեթերատուների գանազան տեսակներ՝ կատվանուռի, պերիլա, դադձ և այլն։ Դրանցից առանձնապես հետաքրքրական է Moussini տիպի կատվանանուռը, վորը մաքուր կիտրոնի հոտ ունի, ըստ նախնական տվյալների՝ այդ բույսի յուղը պարունակում է ցիտրոնիլլալ, վորը շատ արժեքավոր նյութ է սննդի և պարֆյումերիայի արդյունաբերության համար։

Այդ հողամասից վերև գտնվում են փոքր քանակությամբ տեղական և կադանիլիսի վարդեր, վորոնք անկլաված են վործելու համար, թե մեր պայմաններում դրանք վորքան վարդի յուղ կարող են տալ։ Յինթադրվում է հետագայում, այդ ամբողջ հողամասը զբաղեցնել միայն յուղատու վարդերի սորտերով, այնուհետև, նկարագրած հողամասից քիչ ցած, այցելուն ուղղվում է դեպի հաջորդ հողամասը, վորտեղ ձևավորված է լյուֆֆայի (Luffa cylindrica Roem) ծառուղին։ Լյուֆֆան արժեքավոր տեխնիկական բույս է, ծաղումով Հնդկաստանից։ Լյուֆֆան լայն չափերով մշակվում է ձապոնիայում, Չինաստանում, ԱՄՆ-ում, Աֆրիկայում։ ԽՍՀՄ-ում լյուֆֆան մշակվում է միայն 1926 թվից։ Լյուֆֆայից ստանում են մաշակա։ Սուբտրոպիկ լյուֆֆա բույսը հետաքրքրութուն է ներկայացնում նաև Հայկական ԽՍՀ-ի համար։ Մի քանի տարվա փորձերը ցույց են տվել, վոր լյուֆֆայի մշակութունը Հայաստանի ցածրադիր շրջաններում բավական արդյունա-

վեա ե, վորովհետև տալիս ե դգալի քանակությամբ լավ վորակի բերք:

Այս ծառուղուն հաջորդող հողակտորը յեռանկյան ձև ունի: Տվյալ հողակտորը բռնված ե յեթերա-յուզա-տու բույսերի տեսակներով (պերիլա, խորդենի, բեր-զամոտի ուրց և այլն): Այս բույսերից առանձին հե-տաքրքրություն ե ներկայացնում ուրցը (Thymus): Ուրցի այս տեսակը միայն վերջերս ե հայտնաբեր-վել Հայկական ԽՍՀ-ի վայրի աճող Ֆլորայից: Այս ուրցը պարունակում ե բերդամոտի հոտ ունեցող յե-թերային յուղ, վորն ամենաարժեքավոր յուղերից մեկն ե թե պարֆյումերիայի և թե սննդի արդյունաբերու-թյան համար:

Այդ հողակտորում լայն կերպով ներկայացված են հոտավա խորդենու յերեք սորակը: Ինչպես հայտնի յի, խորդենու յուղը հիմնական կոմպոնենտ և դուխի-ների և ողեկոլոնների համար, բացի դրանից, այդ յու-ղը գործադրվում ե նաև արդյունաբերության մի շարք այլ ճյուղերում (սննդի, լիկյորի, ողու, դեղագործական և այլն): Խորդենին ներկայումս մշակվում ե 400 հեկ-տարից ավելի տերիտորիայի վրա և Հայկական ԽՍՀ-ի ցածրագլխի շրջանների կարևորագույն կուլտուրաներից մեկն ե:

Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Բուսաբանական Ինստիտուտի փորձերը ցույց են տվել, վոր խորդենու կուլտուրան հնարավոր ե տարածել և հանրապետության նախալեռնային գոտում:

Գնալով տնկարանի ուղղությամբ, հենց նոր նկա-րագրված հողակտորից մենք ընկնում ենք մի մեծ քա-ռանկյուն հողամաս, վորը բաղկացած ե յոթ շարք մարզերից (այս և վերը նկարագրված յեռանկյուն հո-

դամասն իրարից բաժանվում են սև ընկույղի (Juglans nigra) ծառուղով: Մարզերի առաջին շարքը բռնված ե այգու աշխարհագրական բաժնի տնկարքներով և ցանքերով, յերկրորդ շարքը՝ յեթերա-յուզատու բույ-սերով: Յերրորդ շարքում ներկայացված ե հիմնական կուլտուրատուների հավաքածուն՝ զրիմ-սագիդ, կոկ-ւագիդ, տաու-սագիդ և գվայուլան: Նշված կուլտու-րատուները ներկայումս գանվում են ուսումնասիրման տողիայում: Չորրորդ շարքը բռնված ե ավալոիդ բույսերով (մուլի ժանտընկույղ և ուրիշ): Հինգերորդ և վեցերորդ շարքերը բռնում են վայրի յեթերա-յու-զատու բույսերի հավաքածուները: Սրանցից առավել հետաքրքրական են ներոլյան դագձը (նարինջի հոտ ու-նեցող բույս), զանազան հոտ ունեցող ուրցերը և ու-րիշներ: Յոթերորդ շարքում ներկայացված ե դեղա-տու բույսերի հավաքածուն (տանգուտական խավար-ծիլը, տուղտը, յերիցուկի զանազան տեսակները, գեր-չակը և ուրիշներ): Տվյալ շարքի վերջում, մի քանի մարզերում տնկված ե քրքում, վորը միաժամանակ թե դեղատու և թե սննդատու բույս ե: Հողամասի վեր-ջին կուրաինան, վորը գտնվում ե մանր կաղինի (Co-rylus Avellana) ծառուղու հետևում, բռնված ե խոր-դենու զանազան սորտերի հավաքածույով: Այստեղ առանձին հետաքրքրություն են ներկայացնում սեր-մերից և տերեններից ստացված խորդենու բույսերը, ինչպես նաև նոր սորտերը, վորոնք ընթացիկ տար-վանից Հայաստանի պայմաններում մտցվում են կուլ-տուրայի մեջ:

Այս բաժինը գտնվում է այդու տերիտորիայի հյուսիս-արևելյան սահմանի մոտ: Բուսաբանական ինստիտուտի շենքից դեպի ոգտակար բույսերի բաժինն ամենից հարմար է անցնել բարդիների ծառուղով, վորը կազմում է «Կասկադի» շարունակութունը: Այդ բաժնի հողամասը ներկայումս բռնում է մոտ 0,5 հեկտար տարածութուն: Ծառուղու կողմից մտնելիս՝ այդ հողամասի կենտրոնում տեսնում ենք մի կլոր հրապարակ՝ ծաղկամարդերով: Կենտրոնի շուրջը գասավորված են առանձին հատվածներ՝ կոլեկցիոն մարզերով:

Բաժնի նպատակն է ներկայացնել մարդու համար այս կամ այն տեսակետից ոգտակար բույսերը: Այդ խմբին ամենից առաջ պատկանում են զանազան կուլտուրական բույսեր, բացի այդ՝ ուրիշ շատ բույսեր, վորոնք այժմ հայտնի չեն միայն վորպես վայրի աճող, բայց այնուամենայնիվ այս կամ այն կիրառումն են գտնում մարդու կենցաղում: Այս վերջիններից մի քանիսն այնքան արժեքավոր հատկութուններ ունեն, վոր արժանի չեն մշակութայն մեջ մտնելու:

Շարժվելով կենտրոնական հրապարակի շուրջը ձախից աջ, այսինքն ժամացույցի սլաքի ուղղությամբ, մենք հաջորդաբար կտեսնենք կոլեկցիոն մարզերի հետևյալ հատվածները:

### 1. ՀԱՅԱԲՈՒՅՍԵՐ

Այստեղ հավաքված են յեզիպտացորենի, ցորենի, պարու և աշորայի զանազան ձևերը: Հենց մուտքի մոտ (մուտքից դեպի ձախ) գտնվում են յեզիպտացորենի կամ մախի (Zea Mays) փոփոխակների մարզերը, այ-

նուհետև գալիս են մյուս հացարույսերը: Ցորենի ձևերն այստեղ խմբավորված են ըստ բուսաբանական տեսակների, այնպես վոր կարելի չե տեսնել փափուկ ցորենի (*Triticum vulgare*), կարծր ցորենի (*Triticum durum*), պարսկական ցորենի (*Triticum persicum*) և մի քանի այլ ցորենների փոփոխակների հավաքածու: Կուլտուրական ցորեններից բացի, այս հողակտորի վրա ներկայացված են նաև Անդրկովկասում աճող վայրի տեսակների հետաքրքրական ձևերը, դրանց են պատկանում *Triticum boeoticum*, *Triticum thaoudor*, *Triticum Timopheevii* և մի քանի այլ տեսակներ:

### 2. ՀԱՏԻԿԱՎՈՐ ԸՆԴԵՂԵՆՆԵՐ

Այս սեկտորում, վորը ժամացույցի սլաքի ուղղությամբ հետևում է անմիջապես հացարույսերի հավաքածույին, հավաքված են լրբու զանազան տեսակներ, վորոն, սխեռ, վոսպ և դրանց մոտ ցեղակիցները, ինչպես նաև սոյա և գետնանուշ (*Arachis hypogaea*): Բացի իսկական լրբու (*Phaseolus vulgaris*) տեղական սորտերից՝ այստեղ ներկայացված են նաև հետաքրքրական, խոշոր պտուղներով ամերիկական սորտեր «լիմա» խմբից (*Phaseolus limatus*): Հետաքրքրական է նաև Անդրկովկասի մի քանի շրջաններում մշակվող մանրապտուղ մաշը (*Phaseolus aureus*):

### 3. ԲԱՆՋԱՐԱՆՈՅԱՑԻՆ ԲՈՒՅՍԵՐ

Դրանք գասավորված են հատիկավոր ընդեղենների բաժնից անմիջապես հետո, ըստվորում դրան անմիջապես կից են հատապտուղներով (գետնամորի, յելագ) և մեղրատու բույսերով բռնված մի քանի մարզեր,

խսկ հետո արդեն դասավորված են խոհական բանջարանոցային կուլտուրաներ, վորոնց մեջ կարելի չե տեսնել թե ալիսիսի ունիվերսալ բանջարեղեններ, ինչպիսիք են կաղամբը, բողկը, սալաթը և ուրիշ, և թե ալիսիսի բույսեր, վորոնք վորպես ուտելիք գործ են անվում գլխավորապես Արևելքի յերկրներում, դրանց թվին են պատկանում Հայաստանում բուրբին հայտնի թարխունը (*Artemisia dracunculus*), քինձը (համեմ, *Coriandrum sativum*), ուհանը (*Ocimum basilicum*), բամբակ (Hibiscus esculentus) և մի քանի ուրիշներ: Ավելի հազվագյուտ բանջարեղեններից պետք է նշել արտիշոկները (*Cynara scolymus*): Այստեղ կան նաև Հայաստանի վայրի ձեով աճող բույսերի ալիսիսի տեսակներ, վորոնք մշակութայն մեջ չեն հանդիպում, բայց բնակչուլթյան կողմից միշտ հավաքվում և գործ են անվում կերակրի մեջ: Սրանց թվին են պատկանում սնձի (*Scorzonera*), կակաչի կամ խաշխաշի (*Papav*s), բալդրղանի (*Heracleum*) և մի քանի այլ բույսերի տեսակները:

#### 4. ՎԱՅՐԻ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԲՈՒՅՍԵՐ

Սրանց հավաքումը և ուսումնասիրումը կարևոր և այն տեսակետից, վոր դա հնարավորություն է տալիս մեզ լայնացնել մեր այգու ծաղկաբույսերի ասորտիմենտը: Մեր վայրի ֆլորայի մեջ կան շատ տեսակներ, վորոնք բոլորովին հայտնի չեն կուլտուրայի մեջ, բայց, այնուամենայնիվ, չափազանց արժեքավոր են դեկորատիվ տեսակետից: Բուսաբանական այգու ոգտակար բույսերի բաժինն այս տեսակների նկատմամբ գիտահետազոտական աշխատանք և կատարում, պար-



Մասնակ  
ժամանակ

գելով դրանց հատկություններն ու պահանջները հողա-  
կլիմայական պայմանների նկատմամբ և ըստ այնմ մշա-  
կելով դրանց կուլտուրայի այս կամ այն յեղանակը:  
Այս հողակտորի վրա հավաքված են յերկու հիմնական  
խմբերի դեկորատիվ բույսեր՝ ա) սուբալպյան և  
ալպյան մարգագետինների բարձրալեռնային տե-  
սակները (վորոնք բերված են գլխավորապես Կիրովա-  
կանի շրջակայքից): Դրանցից ամենահետաքրքրական-  
ներն են՝ գեղին շուշանը (*Lilium Szovitsianum*), Ֆի-  
շերի տերեփուկը (*Centaurea Fischeri*), եթեոպպուսը  
(*Atheopappus pulcherimus*) և մի քանի այլ բույսեր:  
Այս բույսերը Յերեանի կլիմայական պայմաններում  
մի քիչ տուժում են շոգից, բայց միանգամայն պի-  
տանի յեն Հայաստանի բարձրալեռնային—անտառա-  
յին շրջանների համար (Կիրովական, Դիլիջան, Ծաղ-  
կաձոր), բ) չոր, քարքարոտ լանջերի բազմաթիվ քսերո-  
ֆիտ (չորասեր) տեսակները: Սրանք լիովին հարմարված  
են Յերեանի կլիմային և կարող են աճեցվել այստեղ  
առանց ջրելու: Այս տեսակներից կարելի չի ստեղծել  
յուրահատուկ դեկորատիվ ձևավորումներ, գլխավորա-  
պես «քարքարոտ բլուրներ»-ի տեսքով:

#### 5. ԴԵՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

Այս հողակտորում բույսերը գասավորված են բնա-  
կան ընտանիքներով, ենգլերի սիստեմի կարգով, վորն  
ընդունված է մի շարք բուսաբանական հիմնարկնե-  
րում: Այստեղ հավաքված են թե՛ այն բույսերը, վո-  
րոնք գիտական բժշկականության մեջ ընդունված են  
գործածության համար (զանազան յերիցուկներ, յե-  
ղեսպակ, մատուտակ, մատնետունկ և շատ ուրիշ.) և

թե՛ դրանց մոտ ազգակիցերը, վորոնք հետաքրքրու-  
թյուն են ներկայացնում դրանց գեղատու հատկու-  
թյուններն ուսումնասիրելու տեսակետից, և, բացի  
դրանից, այն տեսակները, վորոնք կիրառվում են ժո-  
ղովրդական բժշկականության մեջ: Դեղատու բույ-  
սերից շատերը միաժամանակ նաև յեթերա-յուղատու  
յեն: Ուստի այս սեկտորն ասորտիմենտի տեսակետից  
դժվար է վորոշակի սահմանադժել հաջորդ սեկտորից:

#### 6. ՅԵԹԵՐԱ.-ՅՈՒՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

Այստեղ, նույնպես ենգլերի սիստեմով, հավաքած  
են բույսերի այն տեսակները, վորոնք կիրառվում են  
կամ կարող են կիրառվել գլխավորապես պարֆյունե-  
րիայի մեջ ոգտագործվող յեթերային յուղեր ստանա-  
լու համար: Ամենաարժեքավոր յեթերա-յուղատու բույ-  
սերից նշենք վարդագույն խորդենին (*Pelargonium  
roseum*), ծագումով Հարավային Աֆրիկայից. խորդենու  
կուլտուրան լայն չափով զարգացած է ԽՍՀՄ-ի սուբ-  
արոպիկ շրջաններում, իսկ վերջին տարիները դրա  
մշակությունը լայնորեն արմատավորվում է Հայաստա-  
նի ցածրագիր շրջանների գյուղատնտեսության պրակ-  
տիկայի մեջ: Այնուհետև նշենք մեզ մոտ վայրի ձևով  
աճող բերքամտի ուրցը, մուսկաթային յեղեսպակը  
(*Salvia sclarea*), ստախիսը (*Stachis Schtschegleevii*):  
Վերջին տեսակը լայն տարածված է հարավային Հայաս-  
տանում (Վեգի, Մեղրի) և պարունակում է հոտավետ  
յուղ, վորն իր բուրմունքով շատ մոտ է պարֆյուն-  
մերիայի մեջ բարձր գնահատվող, այսպես կոչված,  
ռալդենինին:

Այստեղ հավաքված են տեքստիլ արդյունաբերութեան մեջ գործածվող բույսերը, այնուհետև զանազան վոչ յեթերային յուղեր, ներկեր, կաուչուկ և այլ տեխնիկական նյութեր ու մասամբ սննդանյութեր տվող բույսերը: Այստեղ կարելի յե տեսնել վուշ, կանեփ, կենաֆ, բամբակենի, ծխախոտ, կարտոֆիլի սորտային հավաքածու և այլն: Հետաքրքրական են կաուչուկատուները՝ զրիմ-սագիզը, տաու-սագիզը, խոնդրիլան:

## 8. ԲՈՍՍՆԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐ

Սրանցով բունված հողամասերը փակում են մեր ճանապարհի ողակը, նորից մեզ բերելով դեպի ոգտակար բույսերի բաժնի յեղքը: Այստեղ կարելի յե տեսնել զանազան դդուհներ, ձմերուկներ, սեխեր, վարունգներ: Հետաքրքրական և ամանեղենի դդուհը կամ գոգրան (*Lagenaria vulgaris*), ձմերուկի վայրի նախահայրերը (*Citrullus Colocynthus* և *C. colocynthoides*) և դդուհների յուրահատուկ ձևավոր տեսակները: Բոստանի Ֆոնի վրա ցրված են մի քանի պտղատու ծառեր— ընկուզենին (*Juglans regia*) և զրա ամերիկական ցեղակիցը— մոխրագույն ընկուզը (*Juglans cinerea*), թթենին, թզենին, նոնենին: Վերջին յերկու տեսակները, լինելով չոր սուբարոպիկների ավելի տաք շրջաններին պատկանող բույսեր, Յերևանի կլիմայական պայմաններում առեօրում են ցրտից: Պտղատու ծառերի և թփերի հիմնական հավաքածուն կենտրոնացված և բոստանային բույսերի հարևան հողամասում, վերջինիս և Բուսաբանական այգու ծառաբույսերի դպրոցի միջև:

Այստեղ հավաքված են թե կուլտուրական ցեղերը և թե զրանց վայրի աճող առավել հետաքրքրական ցեղակիցները: Այստեղ կարելի յե տեսնել դեղձենի, նոնենի, սալորենի, սնձենի, թխենի, և ուրիշ: Շատ հետաքրքրական են դեղձենու և նշենու հիբրիդի յերիտասարդ որինակները, վորոնք աճեցվել են Յերևանի այգիներից հավաքված սերմերից: Պտղատուներից մի քանիսը ներկայացված են նաև ոգտակար բույսերի բաժնի ամբողջ տարածութեանը չորս կողմից սահմանագծող շարքերում: Արևելյան յեղրում տնկված և փշատ, արևմտյան յեղրում՝ խնձոր, հյուսիսային յեղրում՝ դեղձ և հարավային յեղրում՝ ծիրան:

Այն ամենը, ինչ վոր նկարագրված և վերևում, կազմում և ոգտակար բույսերի բաժնի ստեղծման միայն առաջին փուլը: Հետագայում այս բաժնի տարածութեանը կհասցվի մինչև 3—4 հեկտարի: Դրա հետ միասին կծավալվեն ոգտակար բույսերի մեր կուլտուրական ստորախմբների ուսումնասիրման և հարստացման վերաբերյալ բաժնի կողմից տարվող գիտահետազոտական աշխատանքները:

## ՎԱՅՐԻ ՊՏՂԱՏՈՒՆԵՐԻ ՏՆԿԱՐԱՆԸ

Հայաստանը շատ հարուստ և վայրի պտղատու ծառերով ու թփերով՝ թե տեսակային կազմի և թե ձևերի բազմազանութեան տեսակետից:

Հայաստանի Ֆլորայում ներկայացված են վայրի տանձերի, նշերի և այլ պտղատուների որիգինալ ձևվերը, վորոնք թե տեսական և թե գործնական մեծ հետաքրքրութեան են ներկայացնում: Այդ արժեքավոր

բույսերը մանրամասնորեն և բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար ել հենց հիմք է դրվել վայրի պտղատուների անկարանի կազմակերպմանը:

Վայրի պտղատուների տնկարանը հիմնադրված է 1937 թվին: Այնտեղ հավաքվում են վոչ միայն հատկապես պտղատու ծառերն ու թփերը, այլ և ընկուզատուները:

Վորպես ինքնուրույն միավոր տնկարանն սկսեց ձևավորվել 1940 թվին, անտառ-այգիների կազմակերպման աշխատանքների ծավալման կապակցությամբ, պարզելու, թե նրանք, վորպես պատվաստակալ, վոր չափով են պիտանի այս կամ այն տեսակի պտղատուների տարբեր սորտերի համար:

Տնկարանում առայժմ կան վայրի պտղատու ծառերի ու թփերի հետևյալ տեսակները.

1. *Pyrus salicifolia* Pall.—ուռատերև տանձենի (քոսսիկ)—փշոտ ճյուղերով ծառ է, իր նեղ, յերկարավուն և մոխրագույն տերևների պատճառով արտաքին տեսքով շատ քիչ է նման կուլտուրական տանձենուն: Աճում է Հայաստանի հարավային մասում: Պատվաստակալ է կուլտուրական տանձենու համար:

2. *Pyrus communis* L.—սովորական տանձենի, բարձր ծառ է, տերևները ձվաձև են, կլորավուն կամ ովալ՝ յերկար կոթուններով: Տարածված է ամբողջ Հայաստանում: Պատվաստակալ է կուլտուրական տանձենու համար:

3. *Mespilus germanica* L.—ղլուհնի—սովորաբար փշոտ ճյուղերով փոքր ծառ կամ թուփ է, տերևները յերկարավուն են, հակադարձ-ձվաձև, տարածված է ամբողջ Հայաստանում: Պատվաստակալ է կուլտուրական զլուհնու, տանձենու, սերկևիլնու համար:

4. *Malus pumila* Mill.—խնձորենի—փոքր ծառ է լայն ձվաձև կամ յերկարավուն տերևներով, ցածի կողմից պտած աղվամազով և մազմզոտ բողբոջներով: Աճում է Հայաստանի բոլոր անտառներում: Պատվաստակալ է խնձորենու կուլտուրական սորտերի համար:

5. *Amygdalus Fenzliana* Fritsch.—վայրի նուշ—ցածր ծառ կամ թուփ է, դեպի դանազան կողմեր չոված ճյուղերով և մերկ տերևներով: Աճում է հարավային Հայաստանի չոր լանջերում: Պատվաստակալ է նշենու, դեղձենու, սալորենու և այլ պտղատու ծառերի համար:

6. *Prunus cerasifera* Ehrh.—ալուչա—փոքր ծառ է, յերկար ճյուղերով և յերկարավուն սրածայր տերևներով: Տարածված է ամբողջ Հայաստանում: Պատվաստակալ է ալուչայի, սալորի և մի շարք այլ կորիզավորների համար:

7. *Prunus spinosa* L.—մախի—թուփ է՝ տարածված փշոտ ճյուղերով, ելիպսաձև կամ յերկարավուն մանր տերևներով: Պատվաստակալ է կորիզավորների համար: Յենթադրվում է ոգտագործել գաճաճային մշակույթների համար:

8. *Cerasus incana* Pall.—թավատերև բալ—փոքր թուփ է՝ կանգուն կամ տարածված ճյուղերով, յերկարավուն կամ գծա-նշտարաձև տերևներով: Պատվաստակալ է դեղձենու, սալորենու և այլ կորիզավորների համար: Յենթադրվում է ոգտագործել գաճաճային մշակույթների համար:

9. *Corylus avellana* L.—սովորական տխիլ: Բարձր թուփ է՝ կլորավուն կամ ովալ տերևներով:

Բացի այս տեսակներից՝ ծառաբույսերի տնկարանի կուլտիաններում և դպրոցում աճեցվում են մեծ քանակությամբ դանազան տեսակի վայրի պտղատուներ,

վորոնցից շատերը նույնպես իբրև պատվաստակալ են ոգտագործվում կուլտուրական պտղատուների համար: Պատվաստների վերաբերյալ կատարված աշխատանքներից ամենամեծ հետաքրքրություն են ներկայացնում վայրի նշենու (*Amygdalus Fenzliana*) վրա կատարված պատվաստները: Դրա վրա պատվաստված են՝ կուլտուրական նուշ (*քյազզի-բազամ* և *դաշ-բազամ* սորտերը), դեղձենի (*նարնջի* և *դափրան*), սալոր (*փարիզյան* *ուենկոզ*, *ճապոնական*, *վազիր Ալի*), ծիրան (*շալախ*, *խոսրովշահի*): Վորոշ գեպքերում միևնույն ծառի վրա պատվաստված են վեց սորտ՝ բոլոր չորս տեսակներից ել: 1940 թվի ամռան սկզբին միամյա և յերկամյա բոլոր ընձյուղներն ել առողջ եյին և ուժեղ աճ ունեյին:

Վայրի խնձորենու վրա պատվաստված են խնձորի գանազան սորտերը (*գրախտային*, *ձմեռային վոսկյա պերմեն*, *ապորտ*, *կասիլյան* *ուենետ*, *լանսբերգ*, *սեմերենկո*, *կոկտորանո*) և *տանձենի* (*մալաչա*): Աճը լավ ե:

Ալուշայի վրա պատվաստված են ճապոնական սալոր, վիկտորիա, նարնջի դեղձ: Զանազան շատ պատվաստներ ել կատարված են այլ պտղատու, ինչպես նաև դեկորատիվ ծառերի վրա: Վերջիններից կարելի յե նշել հացենին. սրա վրա պատվաստված և յեղրեանի, վորը հրաշալի աճ և տալիս:

#### ԿՈՒԵԿՑԻՈՆ ԶԵՐՄՍՏՈՒՆ

Աշխարհագրական մեր լայնության պայմաններում բուսաբաններին հետաքրքրող և բուսաբանություն ուսումնասիրություն համար անհրաժեշտ բոլոր բույսերը հնարավոր չե բաց հողում մշակել: Արևադարձա-

յին բույսերի, կամ ավելի տաք և խոնավ կլիմա ունեցող վայրերից վերցված բույսերի մշակման համար կառուցվում են ջերմասներ:

Նախատեսվում և Բուսաբանական Ինստիտուտի կոլեկցիոն ջերմասներում հավաքել հնարավորին չափ շատ բույսեր, վորոնք անհրաժեշտ են մասնագետների կողմից ուսումնասիրելու համար: Առանձնապես կարեվոր և կոլեկցիոն ջերմասները՝ բույսերի վորեք խմբի սխտեմատիկան ուսումնասիրելու, ինչպես նաև մորֆոլոգիայի վորոշ հարցերի լուծման համար: Այդպիսի ջերմասները կարևոր և նաև նոր բուսական հումուլթ վորոնող բուսաբանի համար, վորն զբաղվում և եկզոտիկ բույսերի նատուրալիզացիայով, ինչպես նաև դեկորատոր-այգեգործի համար, վորը ձեռքի տակ ունենալով եկզոտիկ բույսերի կոլեկցիան, միշտ ել կարող և վորոշել, թե բույսերի ինչպիսի ցեղեր և տեսակներ կարելի յե մտցնել գրունտային կուլտուրայի մեջ:

Ջերմասնային կոլեկցիան մեծ դեր կարող և խաղալ մասնագետների—բուսաբանների ու այգեգործների նոր կադրեր պատրաստելու գործում, վորոնք ջերմաստանը հարուստ նյութ ունեն իրենց գիտական պատրաստականությունը բարձրացնելու համար:

Յերևանի Բուսաբանական Ինստիտուտի կոլեկցիոն ջերմասները գտնվում և դեռ կազմակերպման, նյութի յախնական կուտակման շրջանում: Սակայն այժմ ել նա նշված տեսակներից վորոշ հետաքրքրություն և ներկայացնում:

Ջերմասնը գտնվող կոլեկցիաները դասավորված են այն սխտեմով, վորն ամենից մոտ և բույսերի ազգակցական կապի և նրանց եվոլուցիայի վերաբերյալ

յեղած ներկա պատկերացումներին: Ստորին կարգի բույսերը, նրանց մշակման և աճեցման առանձնահատկութիւնների պատճառով, ջերմատանը չեն ներկայացված: Բարձր կարգի բույսերից այդ նույն պատճառով ներկայացված չեն մամուռները: Կրեկցիան սկսվում է գետնամուշկերի խմբով, վորոնցից առաջիմ կա միայն Selaginella: Բալական լավ են ներկայացված պտերները:

Պտերների մեջ այցելուն տեսնում է Կոլլիդալում վայրի դրությամբ աճող ոսմունդան (Osmunda regalis)— ՆՄՃՄ-ի ֆլորայի պտերի միակ ներկայացուցիչը, վորը շատ մոտ է ծառանման ձևերին: Հետաքրքիր է «Վեներայի վարսը» (Adiantum Capillus veneris)— խոնավ, ստվերոտ ժայռերի շքեղ պտերը, վորը նույնպես հանդիպում է Կովկասի խոնավ շրջաններում: Եկզոտիկ տեսակները ներկայացված են Asplenium, Nephrodium, Pteris և այլ ցեղերով: Ուշադրավ է Asplenium bulbosum-ը, վորն ոժտված է վիվիպարիայով, այսինքն փոքրիկ բողբոջների ոգնությամբ բազմանալու ընդունակությամբ, բողբոջներ, վորոնք առաջանում են տերևների վրա և արդեն մայրական բույսի վրա դառնում են բույսիկներ և վորոնք բաժանվելով իրենց առաջացնող բույսից, արագ կերպով արմատանում են հողի մեջ, մայրական բույսի շուրջը:

Սազոտիները, բույսերի այդ հնագույն կարգը, վորը ներկայումս ունի միայն մի քանի կենդանի ներկայացուցիչ, մեր ջերմատանը ներկայացված է միայն Cycas-ի յերկու տեսակով: Այդ տեսակներից Cycas neocaledonica-ն հազվագյուտ բույս է նույնիսկ հին բուսաբանական այգիների մեծ և հարուստ ջերմատաներում: Այդ տեսակը ամերիկական հայտնի բուսաբան

Սվինգելի կողմից կուլտուրայի մեջ է մտցվել միայն վերջերս:

Փշատերևներից ավելի հետաքրքրական են Podocarpus և Araucaria: Podocarpus-ը փշատերև բույսի մի որինակ է, վորի սերմերն ունեն փափուկ պատյան և իրենց կազմությամբ հիշեցնում են ծածկասերմերի պտուղը— կորիզապտուղ, ըստ եյության վոչ մի ընդհանուր բան չունենալով վերջինիս հետ: Փշատերևների թվում պեսքե նշելնաև գեղանի կրիպտոմերիայի (Cryptomeria japonica aben, elegans) մեկ լավ որինակ, վորն արմատակալված է տակառի մեջ:

Կրիպտոմերիայի այս ձևը ճապոնացիներն ստացել են Cryptomeria japonica վայրի տեսակից, վորի համար վերցրել են յերիտասարդ ստադիայում գտնվող կրիպտոմերիայի ծառերի կտրոնները, վորոնց տերևները և ամբողջ տեսքը խիստ տարբերվում են հասունացած ծառերից: Այս յեղանակով ֆիքսացիայի յենթարկած յերիտասարդ ստադիան ստացել է հատուկ պարտեզային անուն և տարածվում է այգիներում բացառապես կտրոնների միջոցով, այսինքն վեգետատիվ ձևով: Յերբնակի նկատվող վերադարձը դեպի նորմալ բազմացումը առաջ է բերում փոքր քանակությամբ ծրունակ սերմեր, վորոնք ցանելու դեպքում նորից տալիս են սկզբնական բույսը, այսինքն՝ Cryptomeria japonica իր ախլիկ ձևով:

Ծածկասերմ բույսերը մեր ջերմատանը ներկայացված են ամենից հարուստ: Ծածկասերմերի պրիմիտիվ խումբը, վորից ֆիլոգենետիկ ձևով ստացվում են շատ ուրիշները,—Magnoliales կարգը— ջերմատանը ներկայացված է քիչ ձևերով. մագնոլիաներից հետաքրքրական է Michelia fuseata անտեսք գորշագույն

ծաղիկներ ունեցող մի բույս՝ բավական ուժեղ և գուրեկան հոտով: Այս տեսակը հաջողութեամբ մշակվում է գրունտում—Կովկասի Սև-ծովյան ափերին:

Այնուհետև ծածկասերմերի շարքում մենք տեսնում ենք կեղծ կամֆարային դափնին (Cinnamomum glandulifera)— Հնդկաստանի և Հիմալայների սովորական մի ծառ: Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում այդ ծառը վաղուց ընտելացել է Սև ծովի Կովկասյան ափերում և, որինակ՝ Բաթումիում կարելի չէ տեսնել ամբողջ փողոցներ՝ յերկու կողմից անկված այս գեղեցիկ մշտադալար տեսակով: Այնուհետև գալիս են Mahonia ամերիկական թուփը, վորն իր հայրենիքում աճում է սոճու անտառների ծածկոցի տակ, Ֆիլոուսների տեսակները, ավստրալիական ակացիաները: Վերջին ցեղի նշանավոր ներկայացուցիչը՝ Acacia melanoxylon-ը առանձնապես հետաքրքրական է վորպես տերևային որզանների եվրոպեացի ահնառու որինակ: Մենք տեսնում ենք նորմալ փետրածև տերևի Ֆիլոգիում դառնալու բոլոր ստադիաները: Ակացիաների կողքին կա հարավ-ամերիկյան Ֆեյսոյա ծառի մի փոքրիկ որինակ, այդ ծառը սկսել են բազմացնել մեզ մոտ, Կովկասի Սև-ծովյան ափում համեզ և հոտավետ պտուղների համար, վորոնք իրենց համով հիշեցնում են յերազը: Մի քիչ հեռու, իրենց հաստ կապտավուն և անփայլ տերևներով աչքի յեն ընկնում ավստրալիական եվկալիպտոսները: Ինչպես հայտնի չէ, եվկալիպտոս (այդ ցեղի բազմաթիվ տեսակներից մի քանիսը) իր բարձրութեամբ յերկրորդ ծառն է ամբողջ աշխարհում: Իրենց հայրենիքում մի քանի տեսակները հասնում են մինչև 80 մետր և ավելի բարձրութեան և դրանով մրցում են բուսական աշխարհի հակա մամոնտի ծառի (Sequoia

gigantea) - հետ, վորը մեր ջերմատանը դեռևս չկա: Եվկալիպտոսները մեզ մոտ հաջողութեամբ մշակվում են Կովկասյան: Իրանը սալիս են յեթերային յուղեր, արժեքավոր բնափայտ, իրենց դրեղ արմատային սխտեմով և հսկայական գազաթով չորացնում են ճահճային վայրերը, ստողջացնելով մալարիայի տեսակետից վտանգավոր շրջանները:


Ոռոը որինակների շարքում յերկաքիլավորների թվից հետաքրքրական է Eryobotria japonica կամ այսպես կոչված լիվան (այլ կերպ ասած՝ ճապոնական զկեռը), վորը Սև ծովի ափին վաղուց մշակվում է վորպես պտղատու բույս: Մա ծաղկում է ձմռանը, իսկ վտակեզույն թթվաչ պտուղները հասնում են զարնանը, յերբ այդիներում դեռևս վոչ մի այլ պտուղ չի լինում:

Ջերմատանը շատ հետաքրքրական է այսպես կոչված սուկուլենտների (այսինքն հյութալի բույսերի) խումբը, վորը եվրոպեացի պրոցեսում հարմարվել է դիմանալ անընդհատ յերաշտին՝ իր մոտ՝ խոնավութեամբ սոգորված հյուսվածքների և որզանների ոգնութեամբ, վորոնք պատած են խիտ կուտիկուլայով, մինիմալ թիվով հերձանքներով և արանապիրացիայի խիտ դժվարացած պրոցեսով: Ընդհակառակը սուկուլենտ բույսերի ծաղիկները շատ նուրբ են, եֆեմեր, հաճախ մնում են միայն մի քանի ժամ, սովորաբար խոշոր են և գեղեցիկ, բայց յերևան են գալիս սովորաբար բավական հազվապես: Ծաղկումն այնպես է հյուսվում բույսը, վոր, որինակ՝ ազավայի ծաղկած անհատներն այնուհետև արագ կերպով մեռնում են:

Սուկուլենտներն առանձնացված են սխտեմից, դրանց թվում մենք տեսնում ենք թե յերկաքիլ և թե միաշաքիլ բույսեր, վորոնք յերբեմն արտաքուստ նման

են իրար: Սուկուլենտ բույսերի որինակի վրա մինք  
 դիտում ենք, թե ինչպես ընուլթյունը, միջավայրի  
 միանման պայմաններում, բույսերի կառուցվածքի աս-  
 պարեզում միանման հետևանքների յե հասնում, ան-  
 կախ նրանց ծագումից և ազդակցությունից, այսինքն՝  
 մենք այստեղ հանդիպում ենք կենսաբանական կոն-  
 վերգենցիայի յերևույթի: Այստեղ հարուստ կերպով  
 ներկայացված և կակտուսների ընտանիքը. այս կակ-  
 տուսները գոյացնում են կամ գնդաձև, կամ թիթեղաձև  
 և կամ գլանաձև մտուս որդաններ (ցողուններ), վո-  
 ռոնք, ավելի կամ պակաս խտությամբ ծածկված են  
 փշերով, այդ փշերը սովորական մորֆոլոգիկ պատկե-  
 րացումներով համապատասխանում են խիստ սեզոնկ-  
 ցիայի յինթարկված տերևների, վորոնք կորցրել են  
 իրենց ֆոտոսինթեզի հիմնական և գլխավոր ֆունկ-  
 ցիան: Աստիլիացիա կատարող հյուսվածքը կենտրո-  
 նացած և ցողունների մեջ: Կակտուսների մեջ այստեղ  
 կան Echinocactus, Cereus, Pilocereus, Opuntia ցեղերի  
 շատ տեսակներ: Առանձնապես որիդինալ և Piloce-  
 reus-ը՝ կլոր ցողունի գազաթին յերկար մազիկների  
 հետաքրքրական փնջիկով: Դրանք բոլորն ևլ ծագումով  
 չոր Մեքսիկայից են: Միաշաքիլ սուկուլենտները ներ-  
 կայացված են Agavae և Aloe-ի տեսակներով:

Վոչ սուկուլենտ միաշաքիլավորները, վորոնք դա-  
 սավորված են սխտեմով, ջերմատանը ներկայացված են  
 բազմաթիվ ընտանիքներով և ցեղերով: Այստեղ առաջին  
 հերթին ուշադրություն են գրավում արմավենիները,  
 վորոնք բարեխառն և ցուրտ յերկրներում բացառապես  
 սենյակի կամ ջերմատան բույսեր են: Մակայն մերձ-  
 արևադարձային գոտում, այն վայրերում, վորտեղ  
 նրանք վայրի վիճակում չեն աճում, արմավենիները հա-



Տեսակա-  
 վոր վառվերի  
 խավրը.

Չող կերպով մշակվում են գրունտում: ԽՍՀՄ-ում գրունտում (Արևմտյան Վրաստանում) մշակվում է դրանց ամբողջ 22 տեսակ: Այդ արմավենիներից մեր շերտատանը ներկայացված են *Trachycarpus excelsa*, *Chamaerops humilis* և *Neowashingtonia polifera*: *Trachycarpus*-ը, կարելի չէ ասել, ամենից սակավապահանջ արմավենին է: ԽՍՀՄ-ում նա աճում է ամբողջ Սև-ծովյան ափերում, Տուսպսեյից սկսած մինչև Բաթումի: Աճում է նաև Թբիլիսիում: *Chamaerops humilis*-ը հայտնի չէ իր յերկրորդային տարածումով ամբողջ Միջերկրական ծովի ափերին: Դա այնտեղ դարձել է լանդշաֆտային ծառ: Գեղեցիկ *Neowashingtonia*-ն փարթևամորեն դարգանում է Սուխումիում:

Կոկոսային արմավենիներից մեզ մոտ կա հազվագյուտ *Cocos Romanziffiona*-ն, վորը հողում բնական ձևով աճեցնելու փորձեր եյին արվում Արևմտյան Վրաստանում, բայց այդ փորձերը վորոշակի հաջողութուն չունեցան: Շատ գեղեցիկ է *Phoenix Roibeline*-ն. սա արմավենու դեկորատիվ տեսակ է և պողպատու չե, ինչպես իր ցեղակից իսկական արմավենին (*Ph. dactylifera*), վորը լայն տարածված է Մերձավոր Արևելքում:

Մյուս միաշաքիլավորներից առանձնապես հարուստ է ներկայացված շուշանազգիների ընտանիքը: Այստեղ մենք տեսնում ենք գեղեցիկ, խոշոր *Crinum*-ները, ծնեբեկի (*Asparagus*) զանազան տեսակները և շատ ուրիշներ: Ուշագրավ են արբոնայինները (*Calla* և ուրիշ.), վորոնք ունեն կոթավոր ծաղկափթթութուն, սպիտակ ծածկոցով: Շուշանազգիներից իր օրբգինալ արտաքինով աչքի չե ընկնում դանայան (*Danae racemosa*), այս թուփը վայրի վիճակում աճում է Կով-

կասի սահմաններում, Թալիշի լեռներում (Ադրբեջան): Այնուհետև գալիս են հացազգիները, բոշխերը, *Commelinaceae* (*Tradescantia*-ի զանազան տեսակները) և ուրիշ շատ բույսեր, վորոնց թվարկման և բնութագրի վրա մենք հնարավորութուն չունենք այստեղ կանգ առնելու:

### ՍԵՐՄՆԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Յերևանի Բուսաբանական այգու սերմնային բաժինը հիմնականում զբաղվում է հետևյալ խնդիրներով.

1. Հայաստանի վայրի և կուլտուրական ֆլորայի սերմերի հավաքումը:

2. Սերմերի փոխանակում Խորհրդային Միութեան և արտասահմանի այլ բուսաբանական այգիների ու գիտա-հետազոտական բուսաբանական հիմնարկների հետ:

3. Սերմեր դուրս գրել Ինստիտուտի և այգու գիտական բաժինների աշխատանքների համար, ինչպես նաև Յերևանի մի շարք հիմնարկների հայտերով (ԲՈՒՀ-եր, գիտա-հետազոտական հիմնարկներ և այլն) առանձին կուլտուրաների վերաբերյալ գիտա-փորձնական աշխատանք կատարելու համար:

4. Հայաստանի վայրի բույսերի սերմերի ծլման մորֆոլոգիան և ծլունակութունը վորոշելու մեթոդիկայի մի շարք հարցերի ուսումնասիրութունը:

Բուսաբանական Ինստիտուտի սերմնային բաժինը գոյութուն ունի Բուսաբանական այգու կազմակերպման օրից: Իր գոյության ժամանակաշրջանում սերմնային բաժնի կողմից հրատարակվել է 5 *Delectus seminum* (սերմերի ցուցակ): 1936 թվի *Delectus seminum*-ն ուներ 220 տեսակ, 1937 թվինը՝ 335

տեսակ, 1938 թվինը՝ 579 տեսակ, 1939 թվինը՝ 800 տեսակ (919 համար), 1940 թվինը՝ 970 տեսակ (982 համար):

Ներկայումս սերմնային բաժինը կապ ունի Սորհրդաշրջային Միության և արտասահմանի մինչև 440 գիտա-հետազոտական հիմնարկների և բուսաբանական այգիներին հետ: Ստորև, № 1 աղյուսակում բերվում է այն յերկրների ցուցակը և քաղաքների, գիտա-հետազոտական հիմնարկների ու բուսաբանական այգիներին թիվը, վորոնց հետ Յերևանի բուսաբանական այգին ցուցակներ և սերմեր է փոխանակում:

Աղյուսակ № 1

№ ըստ կարգի	ՅՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Սերմերի ցուցակներ		Սերմերի նմուշներ	
1	Խ Ս Հ Մ	124	39	51	33
2	Ամերիկա, ՄՆ	10	6	4	2
3	» Արգենտինա	3	1	1	—
4	» Բրազիլիա	2	—	—	—
5	» Կանադա	6	1	2	2
6	» Կոլումբիա	1	—	—	—
7	» Կուբա	6	—	—	—
8	» Մեքսիկա	4	—	—	—
9	» Պարագվայ	1	—	—	—
10	» Պերու	1	—	—	—
11	» Ուրուգվայ	2	1	—	—
12	» Չիլի	2	—	—	—
13	Անգլիա	17	3	4	1
14	Ավստրալիա	9	—	—	—
15	Աֆրիկա	18	1	1	1
16	Բելգիա	10	4	1	4
17	Բուլղարիա	2	1	1	1
18	Գերմանիա	55	19	16	19

№ ըստ կարգի	ՅՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Սերմերի ցուցակներ		Սերմերի նմուշներ	
19	Դանիա	1	1	1	1
20	Թյուրքիա	1	1	—	—
21	Իսպանիա	4	1	—	—
22	Իտալիա	23	8	5	6
23	Հարավսլավիա	3	1	1	1
24	Հնդկաչին	2	—	—	—
25	Հնդկաստան	12	—	—	—
26	Հոլանդիա	19	5	2	4
27	Հունաստան	1	—	—	—
28	Հունգարիա	3	1	—	—
29	Ճապոնիա	7	1	—	—
30	Ճավա	2	—	—	—
31	Նոր Զելանդիա	1	—	—	—
32	Նորվեգիա	1	1	1	1
33	Շվեյցարիա	7	2	2	2
34	Շվեդիա	6	3	3	3
35	Չինաստան	2	1	1	1
36	Պորտուգալիա	3	2	2	2
37	Ռումինիա	3	1	1	1
38	Ֆինլանդիա	2	1	1	1
39	Ֆրանսիա	41	6	5	4

Բերված աղյուսակի համաձայն՝ այդու սերմերի ցուցակներն ուղարկված են 39 յերկիր՝ 400 գիտա-հետազոտական հիմնարկների, բուսաբանական այգիների, ինստիտուտներին կից կաֆեդրաների և այլն: Սերմերի ցուցակներ ստացված են Սորհրդային Միության և արտասահմանի գիտա-հետազոտական հիմնարկներից և բուսաբանական այգիներից՝ 1939 թվին 96 հատ, 1940 թվին (առ 1 VI) 72 հատ: Ստորև, № 2 աղյուսակում բերվում է դուրս գրված և ստացված սերմերի նմուշների քանակը:

ՄԵՐՄԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

Յ Ե Ր Ը	Դուրս և գրված			Ստացված և		
	Արտասահմանից	ԽՍՀՄ-ից	Ընդամենը	Արտասահմանից	ԽՍՀՄ-ից	Ընդամենը
Մինչև 1939 թ.	7415	4405	11820	4712	4088	8800
1939 թ.	6871	2502	9373	4491	1549	6040
1940 թ.						
Մինչև I/VI	5300	2200	7500	2688	1574	4262
5 տարվա ընթացքում	19586	9107	28693	11891	7211	19102

Միայն 1939 թվից մինչև այժմ սերմնային բաժինն ստացել և ավելի քան 180 պատվեր, մինչև 7000 նմուշ ընդհանուր քանակով:

Սերմնային բաժինն ունի մինչև 1000 տեսակ բույսերի սերմերի կոլեկցիա, մեր դաշտերի մոլախոտերի սերմերի և հերբարիումի ուսումնա-ցուցադրական կոլեկցիա:

Սերմնային բաժինն ունի ռեպրոդուկցիայի հողամաս, վորտեղ ցանվում են վորոշ վայրի բույսեր՝ թե սերմեր հավաքելու և թե այդ բույսերի բիոլոգիան ու տնտեսական արժեք ունեցող հատկություններն ուսումնասիրելու համար, դրանց մեր հանրապետությունից գյուղատնտեսական արտադրություն կուլտուրայի մեջ մտցնելու նպատակով:

Բուսաբանական Ինստիտուտի բոլոր սեկտորների և մասնավանդ սիստեմատիկայի սեկտորի աշխատանքի համար հիմնական ձեռնարկ և հանդիսանում հերբարիումը, այսինքն չորացրած և թղթի թերթերի վրա ամրացված բույսերի կոլեկցիան՝ հտիկետներով, վորոնց վրա նշված են բույսի գիտական անունը, բնակավայրը, հավաքելու տեղն ու թվականը և հավաքողի ու տվյալ բույսը վորոշող բուսաբանի ստորագրությունները:

Յերևանի Բուսաբանական Ինստիտուտի հերբարիումն իր՝ Հայաստանի Ֆլորան ներկայացնող մասում պարունակում է ավելի քան 27000 առանձին նմուշներ (ներառյալ նաև Նախիջևանի ԱԽՍՀ-ից հավաքածները), իսկ ընդհանուր մասում (Herbarium generale)՝ մոտ 12000 նմուշ, վորտեղ առանձնապես շատ բույսեր կան Հայաստանի սահմանակից շրջաններից և յերկրներից: Ընդհանուր հերբարիումում կան հարուստ կոլեկցիաներ՝ Միջին Ասիայից, Կովկասի Գլխավոր լեռնաշղթայից, Իրանից, Փոքր Ասիայից և եքստիկատներ՝ Պաղեստինից: Այստեղ են մտել նաև ուկրաինական ու միջին-ուսուական հերբարիումը (վերջինս փոքր քանակությամբ):

Հայկական հերբարիումում տեսակների ընդհանուր քանակը հասնում է մոտ 3000-ի: Յուրաքանչյուր տեսակ ներկայացված է վնչ թե մեկ, այլ մի քանի որինակով, վորոնք հավաքված են Հայաստանի զանազան աշխարհագրական կետերում: Կովկասում տարածված բույսերի համարյա բոլոր ընտանիքներն ու ցեղերը ներկայացված են հերբարիումում:

Հայկական հերբարիոումում ամենից լրիվ ներկայացված են Հայաստանի հարավային չոր շրջանների բույսերը, ինչպես նաև լեռների գագաթների ալպիական ֆլորան:

Հերբարիումի առանձնապես արժեքավոր մասը պետք է համարվի բույսերի այն տիպերի, այսինքն նմուշների կոլեկցիան, վորոնք Հայաստանում վերջերս են հայտարարվել ու նկարագրվել, կամ այսպես կոչված «նոր» տեսակները: Բանն այն է, վոր Հայաստանի ֆլորան ուսումնասիրված է դեռևս շատ անբավարար: Յուրաքանչյուր շատ թե քիչ յերկարատև եքսպեդիցիա կամ եքսկուրսիա բերում է մեկ կամ մի քանի նոր տեսակ, վորոնք մինչ այդ դեռևս բոլորովին անհայտ էին: Յերևանի բուսաբանները նկարագրել են այդպիսի մի քանի տասնյակ նոր տեսակներ: Իրանցից առանձնապես հետաքրքրական են նշենինները—*Amygdalus nairica* և *A. Zangezura*, տանձենինները—*Pirus Sosnovskii* և *P. Takhtadzhiani*, վայրի աշորան—*Secale chaldicum*, աստրագալները—*Astragalus vedicus* և *A. Vavilovi*, վիկը—*Vicia akhmaghanica*: Չափազանց հետաքրքրական են նաև հիպերիկոնի—*Hypericum formosissimum*, բուզրդանների—*Herecleum daralagheseicum* և *Corydalis Nariniana*—բուլբուլին առանձնացած նոր հազվագյուտ տեսակները:

Յուրաքանչյուր ֆլորայի և յուրաքանչյուր հերբարիումի հարստությունը չափվում է նրա մեջ ներկայացված ենդեմիկ տեսակների և իրենց բնույթով հազվագյուտ տեսակների առկայությամբ ու քանակով: Իրանց մեջ հիշատակված նոր տեսակներից բացի (վորոնք մեծ մասամբ հանդիսանում են միաժամանակ և ենդեմիկ տեսակներ), պետք է նշել նաև հետևյալ բույ-



հիպերիկոնի  
վիկա  
հիպերիկոնի

սերը՝ *Leontice minor*, *Papaver orientale*, *Allochrusa versicolor*, *Fibigia suffruticosa*, *Sisymbrium liearinum*, *Draba araratica*, *Physoptychis gnaphaloides*, *Vavilovia Aucheri*, *Astragalus gezeldarensis*, *A. Candolleanus*, *A. coelestis*, *A. uraniolimneus*. *Potentilla cryptophila*, *Symphyantra Zangezura*, *S. armena*, *Campanula radula*, *C. Choziatowskyi*, *Centaurea Behen*, *Amblyopogon erivanensis*, *Callicephalus nitens*, *Inula Seidlitzii*, *Cousinia daralaghesisca*, *Iris elegantissima*, *Bellevalia araxensis*, *Atropis sevan-gensis* և շատ ուրիշներ:

Հայաստանը կարող է պարծենալ իր ֆլորայի մեջ հացաբույսերի վայրի ցեղակիցների առատութեամբ, մանավանդ ցորենի և աշորայի: Այդ բույսերից թվենք՝ ցորենները—*Triticum dicoccoides*, *Tr. boeoticum* և *sp. Urartu*, աշորան—*Secale Vavilovi*, *S. anatolicum*, *S. chaldicum*, *S. perennans*, *S. daralaghesis*.

Այս բոլոր բույսերը լրիվ կերպով ներկայացված են հերբարիումում: Կան նաև պտղատու և մշակվող այլ բույսերի վայրի ցեղակիցների լավ և լրիվ կոլեկցիաներ, բույսեր, վորոնց ծագումը կապված է Առաջավոր Ասիայի և Կովկասի հետ:

Հերբարիումը մեռած կոլեկցիա չէ, նա ամբողջ ժամանակ ապրում է իր առանձին, մեծամասնությունից ծածուկ, անընդհատ կյանքով: Հերբարիումի ուսումնասիրութեան հիման վրա գրվում են ֆլորաներ, այսինքն գրքեր, վորոնք տերմիններով և նկարներով պատկերում են այս կամ այն շրջանի կամ յերկրի ֆլորան: Այսպես՝ Յերևանի Բուսաբանական Ինստիտուտում, հերբարիումի գիտական մշակման հիման վրա, գրվել է ներկայումս տպագրվող «Յերևանի ֆլորան» յերկ-

հատորը, վորտեղ նկարագրված է բույսերի 1343 տեսակ, վորոնք տարածված են Յերևանի Բուսաբանական ոկրուզում:

Մասամբ Յերևանի հերբարիումի նյութերի հիման վրա պրոֆ. Ա. Ա. Գրոսսհեյմը գրել է իր «Կովկասի ֆլորան», վորը ներկայումս լույս է տեսնում յերկրորդ հրատարակութեամբ:

Հերբարիումը միշտ վորպես հիմնական տեղեկատու ձեռնարկ է ծառայում բույսերի ճիշտ գիտական անուններն իմանալու համար, ձեռնարկ է ծառայում նոր հավաքած բույսերը վորոշելու համար: Հերբարիումի կոլեկցիաների հիման վրա ուսումնասիրվում է բույսերի տարածումն այս կամ այն յերկրում և ամբողջ աշխարհում:

Հերբարիումի մեջ է հետազոտողը վորոնում նաև այն մի շարք հատուկ խնդիրների լուծումը, վորոնք կապված են բույսերի ֆիլոգենիայի, նրանց ծագման, վայրի բույսերից կուլտուրական բույսեր առաջանալու հարցերի հետ և այլն: Վերջապես, հերբարիումը կարևորագույն միջոց է դպրոցական բուսաբանությունն ուսումնասիրելու, ուսանողների և մանկավարժների կողմից բուսաբանական աշխատանքներ կատարելու ժամանակ:

Հերբարիումի կազմն անընդհատ հոսում է, նա լրացվում է նոր գտած բույսերով, վորոնք միշտ տեղավորվում են իրենց սխտեմատիկ տեղերում, հերբարիումի կրկնակի որինակներն ուղարկվում են ԽՍՀՄ-ի և արտասահմանի բուսաբանական հիմնարկները՝ նոր կոլեկցիաների հետ փոխանակելու համար, ինչպես նաև բույսերի այս կամ այն խումբը մասնագետ-բուսաբանների կողմից մշակելու համար:

Գիտական ինստիտուտի բոլոր աշխատանքների համար անհրաժեշտ բազա յե հանդիսանում գրադարանը: Յերևանի Բուսաբանական Ինստիտուտի գրադարանը կազմվել է հանգուցյալ բուսաբան Գ. Ի. Լիավինովի գրադարանի մի զգալի մասից, վոր իր ժամանակ ձեռք է բերել Հայաստանի Բուսաբանական այգին:

Գրադարանի հիմնական կորիզ են կազմում գանազան «Ֆլորա»-ները և սիստեմատիկ բուսաբանության տեղեկատուները:


Բացի նոր գրականությունից և ժուրնալների մի ամբողջ սերիայից, վոր ներկայումս դուրս է գրվում (այդ թվում՝ մի շարք արտասահմանյան ժուրնալներ), գրադարանն ունի Հափազանց արժեքավոր անտիկվար գրքեր:

Այդ հրատարակություններից պետք է նշել՝

1—Humboldt, Bonpland et Kuhn, Nova genera et species plantarum, Plantae aequinoctiales, Monographia Melas tomdelearum, 2—Linnaeus, Species plantarum; idem, Sp. pl. Willdenow-ի խմբագրութ., idem, Sistema vegetabilium, Sprengel-ի խմբագրությամբ, idem, Flora suecica, idem, Philosophia botanica; 3—Ammano, Stirpium rariorum in Imperio Rutheno etc., 4—Kunth, Enumeratio plantarum, 5—De Candolle, Prodromus systematis nat. Regni veget. 6—Gmelin, Flora sibirica, 7—Ledebour, Flora rossica, idem, Flora altaica, 8—Boissier, Flora orientalis, 9—Sowerby, British Botany, 10—Reichenbach, Flora germanica excursoria և շատ ուրիշները:

Գրադարանն ունի ավելի քան 3500 հատոր գիրք և ավելի քան 1500 գիտական հոդվածների առանձին արտատպություններ (ոտտիսկներ):

Առաջարան . . . . .	5
Ընդհանուր տեղեկություններ . . . . .	7
Այգու պատմությունը . . . . .	8
Բուսաբանական այգու կառուցվածքը . . . . .	12
Բուսաբանական այգու պուրակային տնկարքները . . . . .	14
Հայկ. ԽՍՀ-ի Ֆլորայի և բուսականության բաժին . . . . .	33
Բուսաբանական այգու ծաղկաբուծությունը . . . . .	40
Մուկուլենաների հողամաս . . . . .	41
Բուսական հոմուլթ . . . . .	44
Ոգտակար բույսերի բաժին . . . . .	48
1. Հացարույսեր . . . . .	48
2. Հատիկավոր ընդեղեններ . . . . .	49
3. Բանջարանոցային բույսեր . . . . .	49
4. Վայրի դեկորատիվ բույսեր . . . . .	50
5. Դեղատու բույսեր . . . . .	52
6. Յեթերա-յուղատու բույսեր . . . . .	53
7. Տեխնիկական և յուղատու բույսեր . . . . .	54
8. Բոստանային բույսեր . . . . .	54
9. Պտղատու ծառեր և թփեր . . . . .	55
Վայրի պտղատուների տնկարան . . . . .	55
Կուլեկցիոն ջերմատուն . . . . .	58
Սերմնային բաժին . . . . .	67
Հեքրաբիում . . . . .	71
Գրադարան . . . . .	76



Պատ. խմբագիր՝ Յ. Դազարյան  
Տեխ. խմբագիր՝ Վ. Մանուկյան  
Լեզվ. խմբագիր՝ Ռ. Տոնյան  
Սրբագրել՝ Տրիբուն  
Պոնտրու սրբագրել՝ Ս. Շահբաղյան

Հանձնված է արտադրութան 19/VIII 1940 թ.  
Ստորագրված է տպագրելու 3/IX 1940  
ՎՅ460. հրատ. № 75, պատվեր № 197, տիրաժ 1000

ԱրմՖԱՆ-ի հրատարակչութան տպարան, Յերևան, Լենինի փ. 67



ԳԻՆԸ 2 ՌՈՒԲ.

2021  
00 14 14

<< Ազգային գրադարան



NL0269762

14062